



Office for Democratic Institutions and Human Rights

ԵԱՀԿ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12 մայիս, 2007 թ.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական  
առաքելության զեկույց



Վարչավա  
10 սեպտեմբեր, 2007 թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>I.</b>	<b>ԱՍՓՈՓԱԳԻՐ</b> .....	<b>1</b>
<b>II.</b>	<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ</b> .....	<b>4</b>
<b>III.</b>	<b>ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ</b> .....	<b>5</b>
<b>IV.</b>	<b>ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ</b> .....	<b>7</b>
<b>V.</b>	<b>ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>9</b>
	Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ .....	9
	Բ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ .....	10
	Գ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ.....	11
<b>VI.</b>	<b>ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ</b> .....	<b>13</b>
<b>VII.</b>	<b>ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒՇԱՐԾԱՎԸ</b> .....	<b>15</b>
	Ա. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ .....	15
	Բ. ՔԱՐՈԶՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ .....	19
	Գ. “ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔՆԵՐ” .....	21
<b>VIII.</b>	<b>ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ</b> .....	<b>22</b>
	Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	22
	Բ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	23
	Գ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՆԻՏՈՐԻՆԳ .....	26
<b>IX.</b>	<b>ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ</b> .....	<b>31</b>
	Ա. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ.....	31
	Բ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	32
	Գ. ԱՅԼ ԲՈՂՈՔՆԵՐ .....	33
<b>X.</b>	<b>ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>35</b>
<b>XI.</b>	<b>ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԵՐ</b> .....	<b>36</b>
<b>XII.</b>	<b>ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ</b> .....	<b>37</b>
	Ա. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ.....	37
	Բ. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ.....	38
<b>XIII.</b>	<b>ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ</b> .....	<b>40</b>
	Ա. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿԱՎՈՐՈՒՄԸ .....	40
	Բ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐ .....	43
	Գ. ԱՅԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ.....	45
<b>XIV.</b>	<b>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>46</b>
	Ա. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	46
	Բ. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	47
	Գ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ .....	48
	Դ. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ .....	48
	Ե. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԸ .....	48
	Զ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ.....	49
	Է. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ .....	50
	Թ. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	52

ԱՌԴԻՐ 1 – ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 53

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ..... 55

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**12 մայիս 2007 թ.**

**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց<sup>1</sup>**

**I. ԱՍՓՈՓԱԳԻՐ**

2007 թ. մայիսի 12-ին անցկացվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները: Ստանալով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հրավերը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2007 թ. մարտի 21-ին ստեղծեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը գնահատել է ամբողջ գործընթացը՝ 1990 թ. կոպենհագենյան փաստաթղթին և ընտրությունների հետ կապված այլ հանձնառություններին դրա համապատասխանության առումով:

Ազգային ժողովի ընտրությունները բարելավվել են, և դրանց անցկացումը մեծ մասամբ համապատասխանել է ԵԱՀԿ-ի շրջանակներում ստանձնած հանձնառություններին և ժողովրդավարական ընտրությունների համար առկա միջազգային այլ չափանիշներին: Այնուհանդերձ, ընտրությունները ԵԱՀԿ-ի շրջանակներում ստանձնած հանձնառություններին և միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնելու՝ հայաստանյան իշխանությունների հայտարարած մտադրությունը ոչ լիովին է իրագործվել: Չնայած նախկինում առկա մի շարք թերություններ շտկելու ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած քայլերին, շարունակում են բավարար չափով չլուծված մնալ որոշ այլ հիմնախնդիրներ, որոնք մասնավորապես առնչվում են նախընտրական քարոզարշավի կարգավորմանը և ընտրական հանձնաժողովների աշխատանքին՝ հատկապես քվեաթերթիկների հաշվարկման և աղյուսակավորման ընթացքում:

Ընտրություններն անցկացվում էին՝ ընտրելու Ազգային ժողովի բոլոր 131 պատգամավորներին. 90 պատգամավոր ընտրվեց համամասնական, իսկ մնացած 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող համամասնական ընտրակարգի համեմատ՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունները որոշ տեղերում բնորոշվում էին որոշ չափով սահմանափակ մրցակցությամբ. 41 մեծամասնական ընտրատարածքից 7-ում առաջադրված էր ընդամենը մեկ թեկնածու: Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին կանանց մասնակցությունն ավելացել էր, չնայած որ մեծամասնական ընտրակարգով առաջադրված 119 թեկնածուներից ընդամենը 5-ն էին կանայք: Թեկնածուների գրանցումը ընդգրկուն կերպով իրականացվել է

<sup>1</sup> Սույն զեկույցն առկա է նաև հայերեն, սակայն անգլերենը շարունակում է մնալ միակ պաշտոնական տարբերակը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) կողմից:

Համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզարշավը և մեծամասնական ընտրատարածքների մեծ մասում մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախընտրական քարոզարշավները եղել են տեսանելի և դինամիկ, և ընթացել են սահմանափակումներից զերծ միջավայրում: Այնուհանդերձ, իշխող կուսակցության և պետության սահմանազատումը երբեմն անպարզ է եղել, որը հատկապես պայմանավորվել է մի կողմից Հանրապետական կուսակցության նախընտրական քարոզարշավի, իսկ մյուս կողմից՝ դրանից ավելի երկար տևած և պաշտպանության նախարարության հովանավորությամբ իրականացված՝ Հայկական բանակի տասնհինգերորդ տարեդարձի նշման քարոզարշավի զուգամիտմամբ:

Լրատվամիջոցներն ընդարձակ կերպով լուսաբանել են ընտրությունները՝ ակնհայտ ջանքեր գործադրելով կուսակցություններին և թեկնածուներին հնարավորություն ընձեռել, որպեսզի նրանք ընտրողներին հասցնեն իրենց ասելիքները: Հանրային լրատվամիջոցները կատարել են պաշտոնական քարոզարշավի ընթացքում եթերաժամանակի տրամադրման վերաբերյալ իրավական պահանջները: Նախընտրական քարոզարշավի լուսաբանումը հիմնականում զուրկ էր քննադատական տեսակետներից, չնայած մեկ բացառության, այն է՝ թերթում տպագրված երկու խմբագրական հոդվածներն ընդդիմության առաջնորդներից մեկի՝ մասնավոր գրույցի ընթացքում հայտնած մտքերի վերաբերյալ, որոնք ենթադրաբար ձայնագրվել էին գաղտնիաբար: Այդ դեպքերից հետո, Հանրապետության Նախագահը նշված գրույցի ընթացքում հայտնված մտքերի մասին խոսելիս դրանք հրապարակայնորեն անվանեց ծանր հանցագործություն, որը լուսաբանվեց լրատվամիջոցների կողմից և անհանգստության տարր սերմանեց նախընտրական քարոզարշավի մթնոլորտում:

Ընտրական օրենսգիրքը, որը 2003 թ. խորհրդարանական ընտրություններից ի վեր զգալիորեն փոփոխվել և կատարելագործվել է, կուռ հիմքեր ապահովեց ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար, չնայած որ դեռ մնում են թերություններ: Դրանք հիմնականում կապված են սահմանված ժամկետից շուտ և անուղղակի նախընտրական քարոզչության իրականացման մասին հստակ դրույթների բացակայությանը և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման իրավական կարգավորմանը, որն ընտրությունների մասնակիցներին հնարավորություն է տալիս գերազանցել քարոզարշավի ֆինանսավորման առկա սահմանափակումները: Բացի այդ, բողոքների և բողոքարկման գործընթացում ի հայտ եկան իրավական դաշտի ներքին հակասությունները: Ընտրակաշառք բաժանելու հնարավոր դեպքերի նկատմամբ չկիրարկվեցին պատժամիջոցներ, և հրապարակայնորեն հնչեցված մտահոգությունների կապակցությամբ ընդհանուր առմամբ քայլեր չձեռնարկվեցին՝ պաշտոնապես բողոքներ չներկայացվելու պարագայում:

Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմիններն ընդհանուր առմամբ արդյունավետորեն աշխատեցին նախընտրական շրջանում և տեխնիկական կարողությունների իմաստով լավ էին պատրաստվել քվեարկության օրվա համար: ԿԸՀ-ն շարունակաբար ջանքեր գործադրեց՝ բարելավելու ընտրական գործընթացների թափանցիկությունը, այդ թվում, մասնավորապես, իր ուսուկայքում տեղադրելով պարբերաբար անցկացվող մամլո ասուլիսների ժամանակացույցը և կարևոր այլ տեղեկություններ: Ընտրական պաշտոնյաների վերապատրաստման և ընտրողների կրթման ուղղությամբ զգալի աճավալ աշխատանքներ իրականացվեցին, չնայած որ դեռ հնարավորություն կա՝ էլ ավելի բարելավելու արհեստավարժությունը քվեաթերթիկների հաշվարկի և աղյուսակավորման գործընթացներում:

Առաջին անգամ առկա էր ընտրողների կենտրոնացված և համակարգչավորված ռեգիստր՝ ուստիկանության իրավասության ներքո: ԿԸՀ-ի և այլոց հետ միասին ուստիկանությունը համապատասխան միջոցառումներ նախաձեռնեց՝ շտկելու հնարավոր անճշտությունները. հանրության ծանոթացման համար ժամանակին փակցվեցին ընտրացուցակները, ընտրողների ռեգիստրը տեղադրվեց ԿԸՀ-ի ուսուկայքում, և հեռախոսային թեժ գծեր բացվեցին քաղաքացիներին առցանց օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Քվեարկությունը դրական է գնահատվել դիտարկված ընտրական տեղամասերի ճնշող մեծամասնությունում, սակայն նկատվել են մեծ թվով ընտրողների կուտակման և քվեարկության գաղտնիության խնդիրներ՝ պայմանավորված քվեարկության խցիկների որոշակի տեղադրությամբ: Չնայած որ քվեաթերթիկների հաշվարկը մեծ մասամբ կատարվել է սահմանված ընթացակարգերի համաձայն, դիտարկված տեղամասային ընտրական հանձնաժողովների ավելի քան մեկ երրորդն արձանագրությունների կազմման հարցում ունեցել է դժվարություններ: Մասնավորապես, որոշ արձանագրություններ լրացվել, ուղղվել կամ ամբողջությամբ վերագրվել են համապատասխան ԸՀ-ում, որն ընտրական զգայուն փաստաթղթերը որոշակիորեն փոփոխելու հնարավորություն է ստեղծել: Քվեաթերթիկների հաշվարկի, աղյուսակավորման և արդյունքների հրապարակման հետ կապված պրոբլեմները, ինչպես նաև թափանցիկության պակասն ազդել են գործընթացի նկատմամբ հանրության վստահության վրա:

Ընտրությունների վերջնական արդյունքները հայտարարվել են մայիսի 19-ին, ապա՝ հունիսի 10-ին հաստատվել Սահմանադրական դատարանի որոշմամբ, որով մերժվել են ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին չորս դիմումները: Այնուհանդերձ, դատարանի որոշման մեջ նշվել են ընտրությունները կարգավորող դաշտի մի շարք թերություններ, մասնավորապես, նախընտրական քարոզարշավների անցկացման, քարոզարշավների և կուսակցությունների ֆինանսավորման, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի և այլ

օրենսդրական ակտերի դրույթների միջև առկա հակասությունների կապակցությամբ:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

2007 թ. մայիսի 12-ին անցկացվեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններ: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2007 թ. հունվարի 30-ից փետրվարի 2-ը Կարիքներ գնահատող առաքելություն ուղարկեց Երևան:<sup>2</sup> Ստանալով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հրավերը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2007 թ. մարտի 21-ին ստեղծեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ)՝ բաղկացած 15 փորձագետներից և 29 երկարաժամկետ դիտորդներից, որոնք տեղակայվեցին Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում և երկրի տարածքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի ղեկավարն էր դեսպան Բորիս Ֆրլեյը:

Հայաստանի իշխանությունները մի քանի առիթներով դիմեցին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին, որպեսզի վերջինս նախապես իրենց տեղեկացնի Միջանկյալ զեկույցների բովանդակության վերաբերյալ: Չնայած որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը միշտ ձգտում է կանոնավոր երկխոսություն հաստատել ազգային իշխանությունների հետ ուշադրության կամ մտահոգության արժանի հիմնախնդիրների շուրջ, զեկույցների նախագծերը մեկնաբանության համար տրամադրելը չէր համապատասխանի ընտրություններ դիտարկելու՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ստանդարտ մեթոդաբանությանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի 3-րդ Միջանկյալ զեկույցը և Հետընտրական 1-ին միջանկյալ զեկույցը հրապարակավ քննադատվեցին իշխանությունների կողմից, որոնք, մասնավորապես, կասկածի տակ առան հայտնաբերումների ճշմարտացիությունը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մեթոդաբանությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հավատարիմ է մնում իր Միջանկյալ զեկույցներում զետեղված հայտնաբերումներին, որոնք արտացոլված են սույն Վերջնական զեկույցում:<sup>3</sup>

Քվեարկության օրվա գործընթացները դիտարկվել են Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության (ԸՄԴԱ) համատեղ ջանքերով, որի կազմի մեջ մտել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) և

<sup>2</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կարիքներ գնահատող առաքելության զեկույցն առկա է հետևյալ ինտերնետային հասցեով. [http://www1.osce.org/documents/odihr/2007/02/23307\\_en.pdf](http://www1.osce.org/documents/odihr/2007/02/23307_en.pdf)

<sup>3</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն ընդունում է, որ 3-րդ Միջանկյալ զեկույցում եղել է մեկ անճշտություն՝ պայմանավորված թարգմանության սխալով. “Օրինաց երկիր” կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանի վերաբերյալ թերթերից մեկում կատարված բացահայտումների կապակցությամբ արված հայտարարության մեջ Նախագահ Քոչարյանն ասել էր ոչ թե “իմ անվտանգության ծառայությունը”, ինչպես գրված էր զեկույցում, այլ՝ “մեր անվտանգության ծառայությունը”:

Եվրոպական խորհրդարանը: ԵԱՀԿ-ի Գործող նախագահ, Իսպանիայի նախարար Միգել Անխել Մորատինոսը ԵԱՀԿ-ի կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող էր նշանակել էր ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ, ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության ղեկավար տկն. Թոնե Թինգսգարդին: ԵՆԽՎ պատվիրակության ղեկավարն էր պրն. Լեո Պլատֆուրը: Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունը ղեկավարում էր տկն. Մարի Ան Բոլեր Բեգնը:

Քվեարկության օրը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից տեղակայվել են 411 կարճաժամկետ դիտորդներ ԵԱՀԿ-ի մասնակից 44 պետություններից, ներառյալ 59 դիտորդներ ԵԱՀԿ ԽՎ-ից, 32 դիտորդներ ԵՆԽՎ-ից և 13 դիտորդներ Եվրոպական խորհրդարանից: ԸՄԴԱ-ն հետևել է քվեարկության ընթացքին երկրի տարբեր մասերում գտնվող ավելի քան 1,150 ընտրական տեղամասերում՝ երկրում առկա 1,923-ից: ԸՄԴԱ-ն հետևել է քվեաթերթիկների հաշվարկին և արդյունքների ամփոփմանն ու արձանագրությունների կազմմանը երկրի տարբեր մասերում գտնվող 108 ընտրական տեղամասերում: ԸՄԴԱ-ն հետևել է արձանագրությունների տեղափոխմանը և արդյունքների աղյուսակավորմանը 41 ԸՀ-ներից 39-ում: Ափսոսալի և ԵԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի ստանձնած հանձնառություններին<sup>4</sup> հակասում է այն, որ Հայաստանի իշխանությունները վերջին պահին հրաժարվեցին մուտքի արտոնագրեր տրամադրել ԵԱՀԿ-ի մասնակից պետություններից մեկի՝ Թուրքիայի կողմից տրամադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հատկապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և արտաքին գործերի նախարարությանը ցուցաբերված աջակցության և համագործակցության համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ցանկանում է նաև երախտիք հայտնել Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակին, Հայաստանի Հանրապետությունում ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների ղեկավարություններին և միջազգային կազմակերպություններին՝ Երևանում գտնվող ներկայացուցչություններին առաքելության ողջ ընթացքում ցուցաբերված օժանդակության և համագործակցության համար:

### III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Մայիսի 12-ի ընտրություններն անցկացվում էին՝ ընտրելու Ազգային ժողովի բոլոր 131 պատգամավորներին: Մահմանադրական փոփոխությունների համաձայն, որոնք սկսեցին գործել այս ընտրությունների ժամանակ, Ազգային ժողովի պատգամավորներն այժմ ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ ի տարբերություն

<sup>4</sup> ԵԱՀԿ-ի 1990 թ. կոպենհագենյան փաստաթղթի 8-րդ կետ. “Ուստի, նրանք դիտորդներ կիրավորեն [ԵԱՀԿ-ի] մասնակից ցանկացած այլ պետությունից՝ ... իրենց համապետական ընտրությունների ընթացքին հետևելու համար...”:



նախկինում սահմանված քառամյա ժամկետի: 90 պատգամավոր ընտրվեց կուսակցությունների կամ դրանց դաշինքների ցուցակներով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող համամասնական ընտրակարգով, առանց “ռեյթինգային” քվեարկության: Այս ընտրակարգի համար բաշխվող մանդատներ ստանալու իրավունք ձեռք բերելու համար կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը պետք է ստանար վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի համապատասխանաբար առնվազն հինգ և յոթ տոկոսը: Մնացած 41 մանդատները բաշխվեցին միամանդատ ընտրատարածքներում հաղթած թեկնածուների միջև՝ մեծամասնական ընտրակարգի դեպքում հաղթող էր համարվում քվեաթերթիկների առավելագույն քանակություն հավաքած թեկնածուն:

2003 թ. մայիսին անցկացված նախորդ խորհրդարանական ընտրություններից ի վեր քաղաքական դաշտում տեղի ունեցած փոփոխություններն անդրադարձան 2007 թ. ընտրություններում մրցակցության վրա: 2003 թ. ընտրություններից հետո ձևավորվել էր կոալիցիոն կառավարություն՝ կազմված Հանրապետական կուսակցությունից, Հայ հեղափոխական դաշնակցությունից (ՀՀԴ) և “Օրինաց երկիր” կուսակցությունից: 2006 թ. մայիսին “Օրինաց երկիր”-ը դուրս եկավ դաշինքից և կուսակցության առաջնորդ պրն. Արթուր Բաղդասարյանը հրաժարական տվեց Ազգային ժողովի նախագահի պաշտոնից: Կոալիցիոն կառավարության կազմում “Օրինաց երկիր” կուսակցությանը փոխարինեց Միավորված աշխատանքային կուսակցությունը: Այնուհանդերձ, կառավարական կոալիցիայի կազմի մեջ մտնող երեք կուսակցությունները 2007 թ. ընտրություններին չմասնակցեցին որպես կոալիցիա:

Քաղաքական կուսակցությունների ընդհանուր տիրույթը որոշ չափով բնորոշվել է հեղինակությունամբ. 2003 թ. ի վեր հայտնվել են նոր դերակատարներ, իսկ որոշ քաղաքական ուժեր կազմալուծվել են կամ հայտնվել անորոշության վիճակում: Այս առումով հարկ է նշել վերջին շրջանում “Բարգավաճ Հայաստան” կուսակցության արագատեմպ վերելքը: Ժամանակին ամենամեծ ընդդիմադիր ուժ հանդիսացած “Արդարություն” դաշինքի կազմի մեջ մտնող գործընկերները չկարողացան համաձայնության հասնել նախքան 2007 թ. ընտրությունները գործող խորհրդարանի լիազորությունների ժամկետի ավարտից հետո դաշինքի գործունեությունը շարունակելու վերաբերյալ և 2007 թ. ընտրություններին կամ ընդհանրապես չմասնակցեցին, կամ մասնակցեցին միմյանցից առանձին:

Հանրապետական կուսակցության առաջնորդ, վարչապետ Անդրանիկ Մարգարյանն անսպասելիորեն վախճանվեց մարտի 25-ին: Սահմանադրությամբ պահանջվող կարգով, Կառավարությունը հրաժարական տվեց, սակայն անցումային կարգով ժամանակավորապես շարունակեց պաշտոնավարել: Ապրիլի 4-ին Նախագահ Քոչարյանը վարչապետի պաշտոնում նշանակեց պրն. Մերժ Մարգարյանին, ով մինչ այդ պաշտպանության նախարարն էր: Ապրիլի 11-ին Նախագահը նշանակեց Կառավարության նոր կազմ, որը չէր տարբերվում մինչ այդ գործած Կառավարությունից, բացառությամբ մինչ այդ պրն. Մարգարյանի կողմից

զբաղեցրած՝ պաշտպանության նախարարի պորտֆելի, որը մնաց թափուր: Մարտի 26-ին պրն. Սարգսյանն ընտրվեց Հանրապետական կուսակցության առաջնորդի պաշտոնում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախկին երկու ընտրությունները, որոնք անցկացվել էին 1999 և 2003 թվականներին, գնահատվել էին որպես ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած հանձնառությունների և ժողովրդավարական ընտրությունների վերաբերյալ առկա այլ միջազգային չափանիշների կատարում չապահովող ընտրություններ:<sup>5</sup>

#### IV. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանում ընտրությունների օրենսդրական դաշտը մեծ մասամբ հիմնված է Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի վրա:<sup>6</sup> ԿԸՀ-ի ընդունած իրավական ակտերը նույնպես պարտադիր են ընտրական պաշտոնյաների և ընտրությունների այլ մասնակիցների համար: Ընտրական օրենսգիրքը փոփոխությունների էր ենթարկվել 2003 թ. Ազգային ժողովի ընտրություններից և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները ներկայացնելուց հետո: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովը ներկայացրել են մի շարք մեկնաբանություններ 2003 թ. հետո կատարված փոփոխությունների վերաբերյալ և եզրակացրել, որ դրանց արդյունքում օրենսգրքում տեղի են ունեցել մի շարք բարելավումներ:<sup>7</sup>

Չնայած որ Ընտրական օրենսգիրքը կուռ հիմք էր ապահովում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար, դեռ մնում են թերություններ: Ընտրական օրենսգիրքը չի անդրադառնում այն հարցին, թե ինչ է նշանակում “նախընտրական քարոզարշավ”, և թե ինչպես պետք է տարբերակել քաղաքական կուսակցության սովորական գործունեությունը նախընտրական քարոզարշավի շրջանակներում իրականացվող գործունեությունից, կամ՝

<sup>5</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցները Հայաստանում անցկացված նախկին ընտրությունների վերաբերյալ առկա են հետևյալ ինտերնետային հասցեով. <http://www.osce.org/odihr-elections/14350.html>

<sup>6</sup> Դրանց հավելվում են իրավական այլ ակտեր, այդ թվում՝ “Քաղաքական կուսակցությունների մասին” օրենքը, Քաղաքացիական օրենսգիրքը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, Քրեական օրենսգիրքը և այլ օրենսդրական ակտեր, ինչպես նաև դատական որոշումներ:

<sup>7</sup> Վերջնական մեկնաբանությունները հրապարակվեցին 2007 թ. մարտին և վերաբերում էին գործող Օրենսգրքին, բացառությամբ 2007 թ. փետրվարին դրանում կատարված ամենավերջին փոփոխությունների: Տես Վենետիկյան հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Վերջնական համատեղ եզրակացություն Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ, ընդունվել է Վենետիկյան հանձնաժողովի կողմից 70-րդ լիագումար նիստի ընթացքում, Վենետիկ, 16-17 մարտ, 2007 (Venice Commission and OSCE/ODIHR, Final Joint Opinion on Amendments to the Electoral Code of the Republic of Armenia, adopted by the Venice Commission at its 70<sup>th</sup> plenary session (Venice, 16-17 March 2007) CDL-AD(2007)013), [http://www.osce.org/documents/odihr/2007/03/23878\\_en.pdf](http://www.osce.org/documents/odihr/2007/03/23878_en.pdf)

ընտրությունների մասնակիցների և այլ անձանց կողմից դրամական միջոցների հավաքագրումը նախընտրական քարոզարշավից առաջ և դրա ընթացքում: Բացի այդ, բողոքների և բողոքարկման վերաբերյալ իրավական կարգավորման մեջ դեռ մնում են անհամապատասխանություններ և հակասության տարրեր: Բացի այդ, արձանագրվել են որոշ դրույթների ի կատար ածումը չապահովելու դեպքեր, մասնավորապես, ընտրակաշառք բաժանելու կամ կուսակցությունների և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորումը կարգավորող դրույթների առնչությամբ:

Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունները, որոնք ընդունվել են 2007 թ. փետրվարին,<sup>8</sup> հիմնականում վերաբերում են Հայաստանի տարածքից դուրս քվեարկությանը (ՏԴՔ) և երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրական իրավունքներին. այդ փոփոխությունների հետևանքով վերացվել է Հայաստանի տարածքից դուրս քվեարկելու հնարավորությունը: Հաշվի առնելով, որ փոփոխություններն ընդունվել են ընտրություններից կարճ ժամանակ առաջ, դրանք ազդել են Հայաստանի՝ երկքաղաքացիություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև արտերկրում բնակվող կամ ճանապարհորդող անձանց ընտրական իրավունքի իրականացման վրա:<sup>9</sup>

Փետրվարին կատարված փոփոխություններով նախատեսվում է, որ ընտրությունները պետք է անցկացվեն միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:<sup>10</sup> Փոփոխություններով նաև նախատեսվում է, որ երկքաղաքացիություն ունեցող անձինք իրավասու են քվեարկել միայն այն դեպքում, եթե նրանք հաշվառված են որպես Հայաստանի բնակիչներ:<sup>11</sup> Չնայած որ Օրենսգրքում խոսվում է “ըստ բնակության վայրի հաշվառման” մասին,<sup>12</sup> Ազգային ժողովի Նախագահը տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն երկքաղաքացիություն և չեն բնակվում Հայաստանում, կարող են համապետական ընտրություններում քվեարկել, եթե հաշվառված են Հայաստանում սեփականություն կամ ներդրումներ ունենալու հիման վրա:<sup>13</sup>

<sup>8</sup> “Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք՝ ընդունված 2007 թ. փետրվարի 26-ին:

<sup>9</sup> ԵՄ Վենետիկյան հանձնաժողովը խորհուրդ է տվել ընտրություններին նախորդող տարվա ընթացքում խուսափել ընտրական օրենսդրության փոփոխություններից: Տես Վենետիկյան հանձնաժողովի 190/2002 եզրակացությունը “Ընտրական գործընթացներում լավ պրակտիկայի կանոնագրքի” 65-րդ հոդված:

<sup>10</sup> Նախկինում Հայաստանի տարածքից դուրս ընտրությունն անցկացվում էր դեսպանություններում և հյուպատոսություններում:

<sup>11</sup> Ընտրական օրենսգրքի 2.7 հոդված:

<sup>12</sup> Նույն տեղը, հոդվածներ 9.1 և 11.1:

<sup>13</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ հանդիպումն Ազգային ժողովի Նախագահ պրն. Տիգրան Թորոսյանի հետ, 2007 թ. մարտի 26:

## V. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

2007 թ. մայիսի 12-ի ընտրական վարչարարությունն իրականացվում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ-ներ՝ 41 մեծամասնական ընտրատարածքներին համապատասխան) և 1,923 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ-ներ): ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները մշտական մարմիններ են, մինչդեռ ՏԸՀ-ները ձևավորվեցին տվյալ ընտրությունների համար նախքան ապրիլի 27-ը: Ընտրական հանձնաժողովների անդամների նշանակումը կատարվում է հիերարխիկ եղանակով, որի պարագայում ԿԸՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է յուրաքանչյուր ԸԸՀ-ի մեկ անդամի, որն իր հերթին նշանակում է տվյալ ԸԸՀ-ի ներքո գործող յուրաքանչյուր ՏԸՀ-ի մեկ անդամի: Փոփոխված Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ ԿԸՀ-ի մեկ անդամը նշանակվում է Հանրապետության Նախագահի, մեկական անդամ՝ Խորհրդարանական յուրաքանչյուր խմբակցության<sup>14</sup> և «Ժողպատգամավոր» խմբի<sup>15</sup>, և մեկ անդամ՝ դատական համակարգի կողմից: Այս համակարգի շնորհիվ բարելավվել են ինստիտուցիոնալ հակակշիռներն ընտրական հանձնաժողովների ձևավորման գործում:

ԸԸՀ ղեկավար «եռյակը», ներառյալ նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը, ընտրվել են ԸԸՀ-ի կողմից, սակայն նրանց ճնշող մեծամասնությունը եղել են Հանրապետական կուսակցության և ՀՀԴ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաև Նախագահի կողմից նշանակված անդամներ, որոնք բոլորը կապակցված են եղել գործող իշխանության գործադիր ճյուղի հետ: Այս իրականությունը մարտահրավեր է դարձել Օրենսգրքով նախատեսված՝ հանձնաժողովների կազմի հավասարակշիռ լինելու պահանջի ոգուն: Թիվ 41 և 12 ԸԸՀ-ներում (համապատասխանաբար Իջևան քաղաք և Երևանի Շենգավիթ համայնք) այդ ԸԸՀ-ների անդամներն ընդունել են, որ «Օրինաց երկիր» կուսակցության նշանակած անդամը հեռացվել է ԸԸՀ-ի ղեկավար եռյակի կազմից այն պատճառով, որ այդ կուսակցությունն ընդդիմադիր է եղել:

ՏԸՀ ղեկավար «եռյակ»-ների կազմն ավելի բազմազան է եղել, քան ԸԸՀ-ներինը: Ընտրական օրենսգրքի համաձայն, ՏԸՀ-ում պաշտոնի բոլոր թեկնածուները պետք է նախապես վերապատրաստված և որակավորման սերտիֆիկատ ստացած լինեն: ՏԸՀ-ների անդամների հետ խոսելիս ԼՄԴԱ-ն ներկայացնող դիտորդները նկատել են, որ նրանցից շատերը տեղյակ չեն եղել, թե որ սուբյեկտի կողմից են իրենք նշանակված ՏԸՀ-ի անդամ: ՏԸՀ-ների որոշ անդամներ դիտորդներին հայտնել են, որ իրենք ներկայացնում են «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ կուսակցություն, որը ներկայացված չի եղել նախորդ գումարման Ազգային

<sup>14</sup> Նախորդ գումարման Ազգային ժողովում կար վեց խմբակցություն:

<sup>15</sup> Պատգամավորներ, որոնք ընտրվել են որպես ոչ կուսակցական թեկնածուներ:

ժողովում և, հետևաբար, իրավունք չի ունեցել ընտրական հանձնաժողովների անդամների նշանակումներ կատարել:

Բ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Նախընտրական շրջանում ԿԸՀ-ն նկատելի բարելավումներ է ապահովել իր արդյունավետության և գործունեության թափանցիկության առումներով: Ընտրությունների համար անհրաժեշտ բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվել են պահանջվող ժամկետում: ԿԸՀ-ն կազմել է կանոնավոր մամլո ասուլիսների ժամանակացույց և իր ուսուկայքում տեղադրել իր կողմից քննված բողոքների մասին աղյուսակ:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների համաձայն, որոնցով պահանջվում է ընտրությունների արդյունքների հրապարակում ըստ տեղամասի, ԿԸՀ-ն ներդրել է համակարգչային ցանց, որով ԿԸՀ-ն կապակցվել է ԸԸՀ-ներին: Այնուհանդերձ, ԿԸՀ-ի կողմից փետրվարին ընդունված որոշման համաձայն, այդ համակարգը չի ներառել Երևանի 13 ԸԸՀ-ներ, որոնցում բնակվում է ընտրողների ընդհանուր թվի մոտ կեսը:<sup>16</sup> Արդյունքում, բոլոր ԸԸՀ-ների գրեթե մեկ երրորդը դուրս է մնացել համակարգից: Դա էապես խաթարել է համակարգչային ցանց ունենալու նպատակի իրագործումը, ներառյալ քվեաթերթիկների հաշվարկի աղյուսակավորման ընթացքում ԸԸՀ-ների կողմից մուտքագրվող տվյալները հեռակա կարգով ԿԸՀ-ին հասանելի դարձնելու և հրահանգները միաժամանակ հաղորդելու նպատակները:<sup>17</sup> Չնայած թափանցիկության վերոհիշյալ միջոցառումներին, ԿԸՀ-ն որոշ հարցեր քննարկել է հասարակությանը չհայտարարված նիստերի ժամանակ: ԿԸՀ-ն նաև փոփոխություններ է կատարել իր գործունեության կանոնակարգում, որոնց համաձայն լիազոր ներկայացուցիչների՝ ներկա գտնվելու իրավունքը սահմանափակվել է միայն ԿԸՀ-ի այն նիստերով, որոնցում քննարկվել են քաղաքական կուսակցություններն ընտրությանը մասնակցելու համար գրանցելուն առնչվող խնդիրներ:<sup>18</sup>

<sup>16</sup> ԿԸՀ-ի թիվ 39-Ն որոշում: Փոխարենը, Երևանի ԸԸՀ-ներից աղյուսակավորված արդյունքներն առաքվել են ԿԸՀ-ի գրասենյակ, որտեղ դրանք ԿԸՀ-ի աշխատակիցների կողմից են մուտքագրվել համակարգչի մեջ:

<sup>17</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի Հետընտրական 1-ին միջանկյալ զեկույցի (որում արձարծվել էր այս խնդիրը) վերաբերյալ ուղարկված պատասխանի մեջ ԿԸՀ-ի նախագահը 2007 թ. մայիսի 25-ի գրության մեջ նշել է, որ համակարգը “օգտագործվում է միայն [Հայաստանի Հանրապետության] շրջաններում, իսկ Երևանի ընտրատարածքներում անցկացված քվեարկության արդյունքների մուտքագրումը կատարվելու է ԿԸՀ-ում”: Նա ավելացրել է. “[Համակարգի] նպատակն է քվեարկության արդյունքները տեղափոխել ԸԸՀ-ներից ԿԸՀ, այսինքն, Երևան, և այն լիովին բավարարում է հրապարակայնություն ապահովելու ակնկալիքները”: Այս բացատրությունը ոչ ամբողջությամբ է համահունչ համակարգի՝ ապրիլի 12-ին կատարված հրապարակային ներկայացման հետ:

<sup>18</sup> Այս խնդիրը ծագել է ապրիլի 20-ին տեղի ունեցած իրավիճակից հետո, ԿԸՀ-ի նիստում, որի ընթացքում քննարկվել են “Հանրապետություն” կուսակցության (նախկինում “Արդարություն” դաշինքի կազմի մեջ մտնող ընդդիմադիր կուսակցություն, որը հարկ է չշփոթել իշխող Հանրապետական կուսակցության հետ) և “Իմպիչմենթ” դաշինքի

ԿԸՀ-ն պատրաստեց կարճ հեռուստահոլովակներ, որոնցում ընտրողներին բացատրվում էին քվեարկության օրվա ընթացակարգերը, և որոնք հեռարձակվում էին պաշտոնական նախընտրական քարոզարշավի ողջ ընթացքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն տեղյակ էր լայնորեն շրջանառող լուրերին այն մասին, որ քաղաքական կուսակցությունների հներկայացուցիչների կողմից հավաքվում են անձնագրային տվյալներ, անձնագրերի պատճեններ կամ բուն անձնագրերը: ԿԸՀ-ն և այլ պետական մարմիններն ընտրողների համար բավարար չափով չէջտադրեցին այն հանգամանքը, որ նրանց քվեի գաղտնիությունը պաշտպանված է օրենքով, և որ քվեարկության օրվա ընթացակարգերը երաշխավորում են քվեարկողի պաշտպանությունը նրա՝ ինչպես քվեարկած լինելու մասին որևէ մեկի տեղեկանալու հնարավորությունից:<sup>19</sup> Որպես հնարավոր արձագանք մեկ այլ ասեկոսեի, ԿԸՀ-ն մայիսի 9-ին արգելեց բջջային հեռախոսների օգտագործումը քվեախցիկում՝ քվեարկության օրվա ընթացակարգերը հստակեցնելու մասին որոշման շրջանակներում:<sup>20</sup>

ԸԸՀ-ները, ըստ ստացված տպավորության, լավ էին պատրաստվել ընտրություններին և ընդհանուր առմամբ աշխատում էին կուլեգիալ կերպով: Որոշ դեպքերում ԸԸՀ-ները շեղվում էին իրենց սովորական աշխատանքային և նիստերի գրաֆիկներից՝ հնարավոր դժվարություններ ստեղծելով ընտրությունների մասնակիցների և դիտորդների համար:<sup>21</sup>

#### Գ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Ընտրական օրենսգրքում 2005 թ. կատարված փոփոխություններով Հայաստանի Հանրապետության ռստիկանության անձնագրային և հրավերների վարչության (այսպես կոչված “ՕՎԻՐ”) վրա դրվեց ընտրողների կենտրոնացված և

ներկայացրած բողոքները, և որի ժամանակ նշված կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների ելույթներից հետո ԿԸՀ-ի անդամների մեծ մասի կողմից հարց է բարձրացվել, թե արդյոք նրանք իրավունք ունեն մասնակցել քննարկմանը: Ընտրական օրենսգրքի համաձայն, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվել հանձնաժողովների նիստերին, ծանոթանալ փաստաթղթերին, հետևել և խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել քննարկումներին և որոշումների կայացմանը:

<sup>19</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ դիտորդները ներկա էին հանդիպմանը, որի ընթացքում Կոտայքի մարզպետը մարզի համայնքապետերին զգուշացրեց նման կերպով չվարվել և անձնագրեր չհավաքել: Սևանում տեղական հասարակական կազմակերպություններից մեկն ընտրողների իրազեկման նպատակով ցուցադրվող հեռուստահոլովակների միջոցով իրականացրեց “Մի վաճառիր քո ձայնը” քարոզարշավ:

<sup>20</sup> ԿԸՀ-ի 147-Ա որոշում “Մայիսի 12-ի ընտրություններում ԸՕ 55 և 56 հոդվածների միասնական կիրառության” մասին: Ասեկոսեները վերաբերում էին հսկվող քվեարկության որոշակի տարատեսակի, որի շրջանակներում քվեարկողները քվեախցիկում օգտագործում են բջջային հեռախոսների մեջ տեղադրված ֆոտոապարատները՝ լուսանկարելու իրենց քվեարկած քվեաթերթիկները:

<sup>21</sup> Տես նաև XII բաժին՝ “Քվեարկության ընթացքի և քվեաթերթիկների հաշվարկի դիտարկումը”:

համակարգչայնացված ցուցակ կազմելու պարտականությունը:<sup>22</sup> Այդ ժամանակից ի վեր զգալի ջանքեր են գործադրվել, այդ թվում՝ միջազգային աջակցությամբ, կազմելու ընտրողների ցուցակները ոստիկանության կողմից վարվող՝ անձնագրերի ռեգիստրի և բնակության ու հաշվառման այլ գրառումների հիման վրա, որը, ըստ ստացված տպավորությունների, շարունակվող գործընթաց է: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի գրուցակիցները հայտնել են, որ ընտրողների ցուցակներում ավելորդ անունները, հիմնականում՝ ոչ ռեգիդենտների, ինչպես նաև ենթադրաբար “ոչ ճիշտ” վայրերում հաշվառված քվեարկողների մասով, շարունակում են պրոբլեմներ առաջացնել:

Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ ընտրողների գրանցումը կատարվում է ըստ “ընտրողների” մշտական հասցեների:<sup>23</sup> Քաղաքացիները նաև պարտավոր են հաշվառվել ըստ բնակության վայրի:<sup>24</sup> Քաղաքացիները կարող են հաշվառվել մշտական կամ ժամանակավոր բնակության հասցեով, իրենց պատկանող գույքի կամ “փաստացի” բնակության հասցեով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի գրուցակիցները կարծիք են հայտնել, որ հնարավոր է, որ ոստիկանության և այլ գրառումները չեն արտացոլում բնակության վայրի փոփոխությունները՝ մասամբ այն պատճառով, որ մշտական կամ ժամանակավոր բնակության հիմքով հաշվառվելու համար պահանջվում է գույքի սեփականատիրոջ համաձայնությունը, սակայն որոշ սեփականատերեր չեն տալիս իրենց համաձայնությունը ներկայում տվյալ գույքի հասցեով բնակվող անձանց հաշվառելու համար: Առկա դժվարություններն էլ ավելի են բարդացել Հայաստանից քաղաքացիների արտագաղթի պատճառով, որն առավել հաճախ ժամանակավոր արտագաղթ է:

Ընտրական օրենսգրքով պահանջվում է քվեարկության օրվանից 40 օր առաջ<sup>25</sup> ընտրողների ցուցակի համապատասխան հատվածը փակցվի ՏՀՀ տարածքում: Հաշվի առնելով ընտրողների ցուցակի կապակցությամբ նախկինում եղած խնդիրները, այս ընտրությունների համար ոստիկանության, ԿԸՀ-ի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների կողմից լրացուցիչ ջանքեր են գործադրվել անճշտությունները շտկելու ուղղությամբ, որը ներառել է “դոնեդուր” ստուգումներ: Ոստիկանությունը և ԿԸՀ-ն զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար կոչ են արել հանրությանը համագործակցել ընտրողների ցուցակի ճշգրտման գործում, ընդ որում, ցուցակը կարելի էր ստուգել և ԿԸՀ-ի ոստկայքում, և ՏՀՀ-ի տարածքում,

<sup>22</sup> Ընտրական օրենսգրքում (9-րդ հոդվածում) 2007 թ. փետրվարին կատարված փոփոխություններով ընտրողների ցուցակը կազմելու և վարելու պարտականությունը, որ նախկինում դրված էր ոստիկանության վարչություններից կոնկրետ մեկի վրա, այդուհետ դրվեց “Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր” ոստիկանության վրա:

<sup>23</sup> Ընտրական օրենսգրքի 11.1 հոդված:

<sup>24</sup> Քաղաքացիների հաշվառումն ըստ բնակության վայրի նույնպես ոստիկանության պարտականությունն է:

<sup>25</sup> Մայիսի 12-ի ընտրությունների համար սահմանված ժամկետը 2007 թ. ապրիլի 3-ն էր:

որից հետո հայտնաբերված սխալների մասին կարելի էր հայտնել Ոստիկանության անձնագրային և հրավերների վարչության համապատասխան տարածքային ծառայությանը:<sup>26</sup>

Նույնիսկ այն դեպքում, երբ ստուգումների արդյունքում պարզվում էր, որ հաշվառված անձը ներկա չէ կոնկրետ հասցեով, դա ոչ բուրդ դեպքերում էր տվյալ ընտրողի անվան դուրսբերման ընտրողների ցուցակից, որպեսզի ընտրողի՝ քվեարկության համար վերադառնալու դեպքում նա գրկված չլինի քվեարկելու իրավունքից: Ուստի, վերոհիշյալ աշխատանքի շրջանակներում ընտրողների ցուցակից հանված անունները համեմատաբար սակավաթիվ են եղել, ներառյալ, ըստ ոստիկանության տվյալների, 9,607 մահացած անձինք և 26,223 անձ, ով ներկա չի եղել հաշվառման հասցեով: Քվեարկության օրը ԸՄԴԱ-ն ընտրողների ցուցակի անճշտության մասին վկայող քիչ հանգամանքներ է արձանագրել. քիչ թվով դեպքեր են դիտարկվել, որոնցում անձանց թույլ չի տրվել քվեարկությանը մասնակցել տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում նրանց անվան չլինելու պատճառով: ԿԸՀ-ն հայտնել է, որ քվեարկության օրվա ընթացքում ընտրողների լրացուցիչ ցուցակում ավելացվել է ընդամենը 1,906 ընտրող:

Մեկ ընտրատարածքում ընտրողների միջին թիվը կազմել է 56,426: Օրենքի համաձայն, միջին թվից շեղումը չի կարող գերազանցել 15 տոկոսը: Երկու ԸԸՀ-ներում (թիվ 14՝ Աշտարակ, և թիվ 32՝ Տաշիր) նշված սահմանաչափը գերազանցվել է: Վեց այլ ԸԸՀ-ներում շեղումը գերազանցել է 10 տոկոսով՝ մի բան, որ թույլատրված է միայն “բացառիկ դեպքերում”:<sup>27</sup> Ընտրատարածքներ ձևավորելու մասին ԿԸՀ-ի որոշման մեջ նշված չի եղել, թե ինչ “բացառիկ” հանգամանքներ են անհրաժեշտ դարձրել նշված շեղումները:

## VI. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մայիսի 12-ի ընտրություններում համամասնական ընտրակարգի քվեաթերթիկում կար 22 կուսակցություն և մեկ դաշինք: Մեծամասնական ընտրակարգի 41 պատգամավորական տեղերի համար մրցում էին ընդհանուր թվով 119 թեկնածուներ: Մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններում արտացոլված էին ոչ թե համապետական, այլև՝ տեղական քաղաքական օրինաչափություններ, ընդ որում, միայն Հանրապետական կուսակցությունն էր մեծամասնական ընտրատարածքների մեծ մասում թեկնածուներ առաջադրել (ընդհանուր թվով 41-ից 25-ում): Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընդհանուր թվի մոտ երկու երրորդը որոշել էր չմասնակցել մեծամասնական ընտրակարգին կամ մասնակցել

<sup>26</sup> Անձնագրային և հրավերների վարչությունը (“ՕՎԻՐ”) ընտրողներին այս առումով աջակցելու նպատակով ստեղծեց հեռախոսային երկու թեժ գիծ: Հանրության արձագանքը սահմանափակ եղավ: Ոստիկանության տվյալներով, թեժ գծերի գործունեության ընթացքում դրանք ստացել են 721 հեռախոսազանգ:

<sup>27</sup> Ընտրական օրենսգրքի 17<sup>1.4</sup> հոդված: Այդ վեցն էին թիվ 13, 16, 19, 27, 35 և 38 ԸԸՀ-ները:



ընդամենը մի քանի ընտրատարածքներում: Ի հակադրություն, մի շարք փոքր կուսակցություններ, որոնք համամասնական ընտրակարգով չէին գրանցվել, յուրաքանչյուր մեծամասնական ընտրատարածքում գրանցում էին մեկական կամ երկուական թեկնածու:

Թեկնածուների գրանցումն իրականացվեց ընդգրկուն կերպով: Բոլոր 24 կուսակցությունները և մեկ դաշինքը, որոնք դիմել էին համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններում գրանցվելու համար, գրանցվեցին ԿԸՀ-ի կողմից ապրիլի 4-ին, ներառյալ նրանց ցուցակներում ընդգրկված բոլոր անհատական թեկնածուները: Գրանցման համար ներկայացված որոշ ցուցակներից հետագայում որոշ անունների դուրսբերումից հետո ստացվեց, որ ամենամեծ ցուցակը գրանցել էր «Օրինաց երկիր» կուսակցությունը (120 անուն), ապա՝ ՀՀԴ-ն (113), «Բարգավաճ Հայաստան»-ը (112) և Հանրապետական կուսակցությունը (111):

Մեծամասնական ընտրակարգում ԸԸՀ-ների ապրիլի 3-ի և 4-ի նիստերում (սահմանված վերջնաժամկետից՝ ապրիլի 7-ից բավական երկար ժամանակ առաջ) որպես թեկնածու գրանցվեցին 135 դիմողներ: Հինգ այլ թեկնածուներ հանել էին իրենց թեկնածությունը նախքան գրանցումը, իսկ մեկ թեկնածուի գրանցումը մերժվեց փաստաթղթերի ոչ լիարժեք լինելու պատճառով: Թիվ 19 ԸԸՀ-ում (Վաղարշապատ) չորս թեկնածուներից երկուսի գրանցումը, գրանցումից կարճ ժամանակ անց, դատարանի որոշմամբ անվավեր ճանաչվեց:<sup>28</sup>

Ընտրական օրենսգրքում վերջերս կատարված փոփոխություններով, որոնք վերաբերում են երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրական իրավունքներին,<sup>29</sup> Հայաստանի՝ երկքաղաքացիություն ունեցող քաղաքացիներին արգելվում է համապետական ընտրությունների միջոցով ընտրվող պաշտոնի համար առաջադրվել որպես թեկնածու: Այնուհանդերձ, ԿԸՀ-ն չի ընդունել ընթացակարգ, որով առաջադրվողներից կպահանջվեր հայտարարություն ներկայացնել կամ այլ կերպ ապացուցել, որ իրենք երկքաղաքացիներ չեն, ընդ որում, որպես թեկնածու առաջադրվելու համար ներկայացվող մյուս պահանջների կատարումը ենթակա է հաստատման փաստաթղթերով:<sup>30</sup> ԿԸՀ-ի նախագահը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին հայտնեց, որ կարելի է ենթադրել, որ որպես թեկնածու առաջադրվող անձինք չունեն երկքաղաքացիություն, քանի որ հակառակ պարագայում նրանք կխախտեին ընտրական օրենսդրությունը: Այդ ենթադրությունը կոնկրետ դեպքում բողոքարկվեց՝ թիվ 13 ԸԸՀ-ում (Երևան, Էրեբունի-Նուբարաշեն), որտեղ հնարավոր մեծամասնական թեկնածուի գրանցումը մերժվեց այն բանից հետո, երբ նա Ռուսաստանի Դաշնության անձնագրի տվյալներ էր ներկայացրել իր առաջադրման նյութերում: Նրա

<sup>28</sup> Տես IX.Բ բաժին՝ «Բողոքներ և գանգատներ թեկնածուների գրանցման վերաբերյալ»:

<sup>29</sup> Տես IV բաժին՝ «Օրենսդրական դաշտը»:

<sup>30</sup> Դժվար կլինեք այդ փոփոխություններն ի կատար ածել, քանի որ հնարավոր թեկնածուների մոտ երկքաղաքացիության բացակայությունը հաստատելու հնարավորությունները սահմանափակ կլինեին:

Թեկնածությունն ավտոմատաբար անընդունելի ճանաչելու փոխարեն ԸԸՀ-ն առաջադրվող անձից պահանջեց ներկայացնել Հայաստանի Հանրապետության անձնագիր, և նրա թեկնածությունը մերժվեց միայն այն ժամանակ, երբ նա չկարողացավ ներկայացնել ՀՀ անձնագիր:

Ընտրություններից թեկնածություններ հանելու համար սահմանված վերջնաժամկետը մայիսի 2-ն էր: Երբ արդեն գրանցված կուսակցություններից երկուսը՝ Հայոց համագգային շարժումը և Առաջադիմական կուսակցությունը, համապատասխանաբար ապրիլի 29-ին և մայիսի 2-ին ետ վերցրեցին իրենց համամասնական ցուցակները, համամասնական ընտրակարգի քվեաթերթիկում մնաց 22 կուսակցություն և մեկ դաշինք: Մեծամասնական ընտրակարգում փոքր թվով թեկնածությունների կողմից իրենց թեկնածությունը հանելուց հետո, սահմանված մայիսի 2-ի վերջնաժամկետից հետո մրցապայքարում մնացին ընդհանուր թվով 119 մեծամասնական թեկնածուներ, որոնք ընդգրկվեցին մեծամասնական ընտրակարգի քվեաթերթիկներում: Թեկնածությունները հանելու համար նշվող հիմնական պատճառն իրենց այն գնահատականն էր, որ թեկնածությունները հանողները հաղթելու չնչին հեռանկարներ ունեին:

Յուրաքանչյուր ընտրատարածքում թեկնածուների միջին թիվը մի փոքր ցածր էր 3-ից: Ընտրատարածքներից 7-ում առաջադրվել էր ընդամենը մեկ թեկնածու,<sup>31</sup> իսկ 11 ընտրատարածքում՝ երկու տեկնածու:<sup>32</sup> Միամանդատ ընտրատարածքում առաջադրված թեկնածուների ամենամեծ թիվը վեցն էր:<sup>33</sup>

## VII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

### Ա. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ընտրական օրենսգրքով երաշխավորվում է հավասարության հիմունքներով պետության օժանդակությունն ընտրությունների մասնակիցների նախընտրական քարոզչությանը: Պաշտոնապես, նախընտրական քարոզարշավը սկսվում է թեկնածությունների գրանցման վերջնաժամկետին հաջորդող օրվանից և ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ: Նախընտրական քարոզչության ընթացքում ընտրությունների մասնակիցներին ուղղակիորեն թույլատրված է իրականացնել քարոզչական մի շարք գործողություններ, այդ թվում՝ ցուցադրել և տարածել նյութեր, կազմակերպել հանրային հանդիպումներ և հաղորդակցվել զանգվածային լրատվամիջոցներով:<sup>34</sup>

<sup>31</sup> ԸԸՀ 7, ԸԸՀ 8, ԸԸՀ 13, ԸԸՀ 20, ԸԸՀ 27, ԸԸՀ 28, ԸԸՀ 32: Եթե միամանդատ ընտրատարածքում գրանցվում էր միայն մեկ թեկնածու, ապա ընտրողներին տրվում էր “դեմ” քվեարկելու տարբերակ:

<sup>32</sup> ԸԸՀ 1, ԸԸՀ 16, ԸԸՀ 17, ԸԸՀ 18, ԸԸՀ 19, ԸԸՀ 22, ԸԸՀ 29, ԸԸՀ 37, ԸԸՀ 38, ԸԸՀ 39, ԸԸՀ 41:

<sup>33</sup> ԸԸՀ 4 և ԸԸՀ 12:

<sup>34</sup> Ընտրական օրենսգրքի 4-րդ գլուխ՝ “Նախընտրական քարոզչությունը” (հոդվածներ 18-23):

Չնայած որ Ընտրական օրենսգրքով արգելվում են քարոզչության որոշ ձևեր, օրենսգիրքն ուղղակիորեն չի անդադարում այն հարցին, թե արդյոք թույլատրվում է ընտրության մասնակիցների կողմից քարոզչական գործողությունների կատարումը նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը:<sup>35</sup> ԿԸՀ-ն մերժեց սահմանված ժամկետի մեկնարկից շուտ քարոզչություն իրականացնելու վերաբերյալ բողոքը, որը ներկայացվել էր մի ՀԿ-ի կողմից՝ «Օրինաց երկիր» կուսակցության նյութերի տարածման վերաբերյալ. իր եզրակացությունը ԿԸՀ-ն հիմնավորեց օրենսդրական հստակ արգելքի բացակայությամբ և սահմանադրությամբ երաշխավորված՝ քաղաքական խոսքի և քաղաքական հավաքներ անցկացնելու ազատությամբ:<sup>36</sup> Ի հակադրություն ԿԸՀ-ի դիրքորոշման, Գլխավոր դատախազությունը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին հայտնեց, որ նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի մեկնարկից առաջ քարոզչություն իրականացնելը փաստացի անօրինական է, սակայն կոնկրետ խախտումները դժվար կլինեն տարբերակել քարոզչության մեկնարկին նախորդող շրջանում իրականացվող իրավաչափ քաղաքական գործունեությունից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի դիտորդները ապրիլի 7-ին՝ նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկին նախորդող օրը, Երևանում տեսան նյութեր, որոնք ուղղակիորեն հանդիսանում էին քարոզչություն «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից՝ փողոցներում փակցված մեծ ցուցանակների տեսքով: Կարգավորման բացակայությունը և, դրա հետևանքով, պաշտոնական քարոզչության մեկնարկին նախորդող շրջանում քարոզչության իրականացման, ըստ երևույթին, շատ թույլատրողական պայմանները հակադրվում են քարոզչության մասին իրավական դաշտում նախատեսված արգելքների մտադրությանը, հատկապես քարոզչության ֆինանսավորման վերաբերյալ արգելքների մասով:

Սահմանադրությամբ պահանջվում է ապահովել քաղաքական կուսակցությունների և քարոզչության ֆինանսավորման հրապարակայնությունը,<sup>37</sup> սակայն բացահայտման, հաշվետվողականության և ընդհանուր վերահսկողության մեջ եղել են թերություններ: “Նախընտրական հիմնադրամները”, որոնք կուսակցությունները/թեկնածուները պարտավոր են ստեղծել քարոզչություն իրականացնելու համար,<sup>38</sup> ԿԸՀ-ին և վերջինիս Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը հիմք են տալիս վերահսկել քարոզչության ֆինանսավորման մասին

<sup>35</sup> 23-րդ հոդվածով արգելվում է քարոզչությունը քարոզչության համար սահմանված ժամկետի ավարտից հետո, այսինքն՝ քվեարկության օրը և դրան նախորդող օրը: 113-րդ հոդվածով նախատեսվում է. “Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունն իրականացվում է սույն օրենսգրքի 18-23 հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում”: Այնուհանդերձ, այդ դրույթներում ուղղակիորեն նշված միակ ժամկետն այն է, ինչ նախատեսված է 23-րդ հոդվածով:

<sup>36</sup> ԿԸՀ-ի ներքին խորհրդակցական հանդիպում, 2007 թ. ապրիլի 9:

<sup>37</sup> Սահմանադրության 7.3 հոդված. “Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը”:

<sup>38</sup> Ընտրական օրենսգրքի 25.1 հոդված:

նորմերի պահանջների կատարումը:<sup>39</sup> Ընտրությունների մասնակիցներն իրենց նախընտրական հիմնադրամների մասին հայտարարագրեր են ներկայացնում քվերակությունից հետո վեց օրվա ընթացքում,<sup>40</sup> որից հետո դրանք ստուգվում են Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից և հրապարակվում ԿՀՀ-ի կողմից կամ, խախտումների դեպքում, ներկայացվում դատարան:

ԿՀՀ-ն ինտերնետում հրապարակել է քարոզչական հիմնադրամների վիճակի ընթացիկ ամփոփագրեր, ներառյալ համախառն մուտքերը, ծախսերը և մնացորդները: Այլ տեղեկություններից գատ, դրանցից պարզ էր դառնում, որ, չնայած որ քարոզչության մեկնարկից անցել էր մի քանի շաբաթ, գրանցված կուսակցություններից մեկը հաշիվ չէր բացել, իսկ չորս այլ կուսակցություններ բացել էին հաշիվներ, սակայն որևէ գումարներ չէին փոխանցել այդ հաշիվներին. նմանապես, մեծամասնական ընտրակարգի 53 թեկնածուներ հաշիվներ չէին բացել:

ԿՀՀ-ն իրավասու չէ քննել, թե արդյոք կուսակցությունը կամ թեկնածուն բացահայտել է վերաբերելի ֆինանսական գործառնությունները, որոնք կատարվել են “նախընտրական հիմնադրամից” դուրս: Քաղաքական կուսակցությունների մասին օրենսդրությամբ նրանցից պահանջվում է ամենամյա ֆինանսական հաշվետվություններ ներկայացնել և դրանք հրապարակել զանգվածային լրատվության միջոցներում<sup>41</sup> նախքան հաջորդ տարվա մարտի 25-ը: Չնայած որ իշխանությունները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին հայտնեցին, որ այդ ամենամյա հաշվետվությունները կարող են միջոց ծառայել՝ վերահսկելու սահմանված ժամկետից վաղ քարոզչության իրականացումը կամ նախընտրական քարոզչության հետ կապված այլ գործողությունների կատարումը, առկա հաշվետվությունների ուսումնասիրությունն այլ բան է ցույց տալիս: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի կողմից ուսումնասիրված բոլոր կուսակցական հաշվետվություններում<sup>42</sup> ֆինանսները նկարագրվում են միայն ընդհանուր դասակարգմամբ՝ չնշելով մուտքերի կոնկրետ աղբյուրները կամ ծախսերի տեսակները, կամ՝ գործառնությունների կատարման նպատակը:

Լուրջ հարց կա նաև այն մասին, թե արդյոք հաշվետվություններում ներկայացված գումարները ստույգ են և լիարժեք: Օրինակ, “Բարգավաճ Հայաստան” կուսակցությունը հաշվետվության մեջ ներկայացրել էր, որ 2006 թվականին ընդհանրապես չի ունեցել մուտքեր, ծախսեր կամ սեփականություն, չնայած որ սովյալ կուսակցությունը, ելնելով առերևույթ նշաններից, լավ ֆինանսավորված կուսակցական ենթակառուցվածք ուներ: Վերահսկողության համար

<sup>39</sup> Նույն տեղը, հոդվածներ 25-26 և 112-113:

<sup>40</sup> Նույն տեղը, հոդված 25.11:

<sup>41</sup> “Կուսակցությունների մասին” օրենք՝ ընդունված 2002 թ. հուլիսի 3-ին, 2002, 2003, 2004 և 2007 թվականներին կատարված փոփոխություններով հանդերձ, հոդվածներ 28 և 28.4:

<sup>42</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն մամուլի միջոցներում գտավ յոթ հաշվետվություն: ԸԴԱ-ն չկարողացավ այդ հրապարակային փաստաթղթերի կրկնօրինակներ ստանալ արդարադատության նախարարությունից:

պատասխանատու մարմնի՝ ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի<sup>43</sup> միակ գործառույթն է պարզել, թե արդյոք հաշվետվությունները ստացվել են ժամանակին և պատշաճ տեսքով: Այլապես, նյութը տրամադրվում է հարկային մարմիններին:<sup>44</sup>

Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է ոչ առևտրային<sup>45</sup> և առևտրային տարաբնույթ կազմակերպություններ ստեղծելու հնարավորություն: Դրանցից մի քանիսը կապված են քաղաքական կուսակցությունների և/կամ թեկնածուների հետ և կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն օժանդակել նախընտրական քարոզչությանը:

Ընտրական օրենսգրքի դրույթներն ուղղակիորեն չեն անդրադառնում այն հարցին, թե արդյոք երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց այլ գործողությունները, որոնց նպատակն է օժանդակել նախընտրական քարոզչությանը, հանդիսանում են քարոզչություն, որը ենթակա է բացահայտման որպես հանգանակություն: ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը տեղեկացրեց, որ դժվար կլինի պարզել, թե արդյոք նման գործունեությունը հանդիսանում է “քարոզչություն”, և որ, ցանկացած դեպքում, այն հաշվետվության ենթակա չէ, բացառությամբ երբ հանգանակություն կատարողի և ստացողի միջև առկա է իրավական պայմանագիր: Արդարադատության նախարարության Պետական ռեգիստրը նույնպես նման դիրքորոշում է որդեգրել քաղաքական կուսակցությունների ամենամյա ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ՝ նշելով, որ իրավական պայմանագրի առկայությունն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի երրորդ անձանց ֆինանսավորումը ենթակա լինի հաշվետվության:<sup>46</sup>

Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ ընտրությունների այն մասնակիցները, որոնք ստանում են համամասնական ընտրակարգում վավեր

<sup>43</sup> Այս մարմինը ստանում է կազմակերպությունների տարբեր տեսակներից (և առևտրային, և ոչ առևտրային) պահանջվող կանոնադրությունները և այլ իրավական փաստաթղթերը:

<sup>44</sup> Գրանցված 75 քաղաքական կուսակցություններից Պետական ռեգիստրը 9-ի գործերը ներկայացրել է համապատասխան մարմիններին ֆինանսական հաշվետվության պահանջները չկատարելու կասկածությամբ, իսկ մեկ այլ կուսակցությունից, որը զրոյական հաշվետվություն է ներկայացրել, պահանջել է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել: Ինչ վերաբերում է “Բարգավաճ Հայաստան” կուսակցության հաշվետվությանը, որում 2006 թվականի համար ներկայացվում են զրոյական մուտքեր, ծախսեր և սեփականություն, Պետական ռեգիստրը խնդիրը չի ներկայացրել համապատասխան մարմիններին:

<sup>45</sup> “Բարեգործության մասին” օրենք (2002), “Հիմնադրամների մասին” օրենք (2005 թ.), “Հասարակական կազմակերպությունների մասին” օրենք (2001 թ.):

<sup>46</sup> Պետական ռեգիստրը տեղեկացրեց, որ բնախրեղեն հանգանակությունները սովորաբար չեն ներառվում կուսակցությունների ամենամյա հաշվետվություններում, սակայն ավելացրեց, որ հաշվետվության ձևը ներառում է հատուկ տող նվերների և հանգանակությունների համար: Նախընտրական քարոզչության համար կատարված բնախրեղեն հանգանակությունների՝ ընտրակաշառք հանդիսանալու խնդրի վերաբերյալ տես նաև VII.Գ բաժինը՝ “Ընտրակաշառքներ”:

քվեաթերթիկների ընդհանուր թվի 25-ից ավել տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ, պետական բյուջեից ստանում են քարոզչության համար կատարած ծախսերի 50 տոկոսի փոխհատուցում:<sup>47</sup> Այս դրույթը դժվար է կիրառել Ազգային ժողովի ընտրությունների նկատմամբ, քանի որ առնվազն 25 տոկոսի նվազագույն պահանջից օգտվում են միայն ուժեղագույն կուսակցությունները: Բյուջեից քաղաքական գործընթացի մասնակիցներին ֆինանսավորում կամ փոխհատուցում տրամադրելու նպատակն է ապահովել հավասարություն նրանց միջև և անկախություն դոնորներից:

#### Բ. ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Պաշտոնական քարոզչությունը տևեց ապրիլի 8-ից մինչև մայիսի 10-ը: Այս ժամանակահատվածում կուսակցությունների և մեծամասնական ընտրակարգի թեկնածուների մեծ մասի կողմից երկրի ողջ տարածքում տեսանելի էր շատ ակտիվ քարոզչություն: Համայնքային իրավասու մարմինները, գրեթե առանց բացառության, կատարեցին քարոզչության նյութեր ցուցադրելու համար տեղ հատկացնելու՝ իրենց պարտավորությունները: Այդ հատկացված տեղերից և առևտրային հիմունքներով վարձակալված տեղերում գովազդից զատ, գերակայում էին թույլատրող պայմաններ, ընդ որում, բազմաթիվ ցուցանակներ էին տեղադրված հանրային և մասնավոր շենքերի և շինությունների վրա:

Ճկուն մոտեցում դրսևորվեց այն ֆորմալ ընթացակարգի նկատմամբ, որի համաձայն համայնքային իրավասու մարմինները պետք է ԸԸՀ-ների ստացած և իրենց փոխանցած դիմումների հիման վրա քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին հավասարության սկզբունքով և անվճար տեղեր հատկացնեն քարոզչության նյութերի համար: Այն դեպքերում, երբ կուսակցությունները կամ թեկնածուները միանգամից ուղղակիորեն դիմել են համայնքային իրավասու մարմիններին, դա, ըստ երևույթին, տեղի է ունեցել ԸԸՀ-ների համաձայնությամբ: Կուսակցությունների մեծ մասը, ըստ երևույթին, նախընտրել են իրենց հավաքներն անցկացնել առանց նախապես հայտարարելու կամ նախապես ոչ երկար ժամանակ առաջ դրանց մասին հայտարարելով, առանց իշխանությունների կողմից դրանց կանխարգելման:

Նախընտրական քարոզչության մեկնարկից առաջ սկսվել և քարոզչության գրեթե ողջ ընթացքում շարունակվել են շատ տեսանելի և գերակա հրապարակային միջոցառումներ՝ Հայոց բանակի 15-րդ տարեդարձը տոնելու առնչությամբ, որոնք իրականացվել են պաշտպանության նախարարության հովանավորությամբ: Դա հիմնականում տեսանելի է եղել Երևանում, որտեղ բնակվում է ընտրազանգվածի մոտ կեսը: Քարոզչության հետագա փուլերում Հանրապետական կուսակցության նախընտրական քարոզարշավը զուգամիտվել է բանակի տարեդարձի առթիվ

<sup>47</sup> Ընտրական օրենսգրքի 113-րդ հոդված, որով 81-րդ հոդվածի դրույթները (“Հանրապետության Նախագահի թեկնածուի նախընտրական քարոզչությունը”) տարածվում են նաև Ազգային ժողովի համամասնական ընտրակարգի նկատմամբ:

իրականացվող քարոզչությանը, ընդ որում, ակնհայտ են եղել քարոզչական ուղերձների և կարևոր մասնակիցների փոխտեղումները: Ակնհայտ է եղել, որ կուսակցության իմիջը, որի առաջնորդը մինչև վերջերս պաշտպանության նախարարն էր, միահյուսվել է զինված ուժերի խորհրդանշաններին և ձեռքբերումներին:<sup>48</sup> Արդյունքում, իշխող կուսակցության և պետության սահմանազատումը, ըստ երևույթին, անպարզ է եղել:

Երևանի կենտրոնում առևտրային ցուցանակների համար նախատեսված տեղերի ճնշող մեծամասնությունը զբաղեցրել են Հանրապետական կուսակցության և “Բարգավաճ Հայաստան” կուսակցության քարոզչական ցուցանակները, ապա, շատ ավելի պակաս չափով, ՀՀԴ-ի ցուցանակները, ինչպես նաև՝ նախատեսված տեղերի մի զգալի մասը զբաղեցվել են բանակի տարեդարձին նվիրված ցուցանակները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն ստացել է “Ժառանգություն” կուսակցության կողմից 2007 թ. մարտին և ապրիլին երեք գովազդային գործակալությունների ուղարկված չորս նամակների կրկնօրինակները, որոնցով այդ կուսակցությունը խնդրում էր ցուցանակների համար տեղ հատկացնել, և որոնք բոլորը ստացել են բացասական պատասխան: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին նաև տրամադրել են ցուցանակների համար տեղ հատկացնող ընկերություններից մեկի և “Օրինաց երկիր” կուսակցության միջև նմանատիպ նամակագրության կրկնօրինակները:

Ռուսալեզու “*Գոլոս Արմենիի*” թերթը երկու խմբագրական հոդվածներ է հրապարակել, որոնցում բացասաբար է նկարագրել “Օրինաց երկիր” կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանի և Միացյալ Թագավորության մի դիվանագետի միջև տեղի ունեցած երկխոսությունը, որը ենթադրաբար գաղտնի կերպով է ձայնագրված եղել: Խմբագրական հոդվածներում փաստարկ է ներկայացվել, թե Բաղդասարյանը ձգտել է խորհրդարանական ընտրությունների բացասական գնահատական ապահովել միջազգային հանրության կողմից: Այդ իրադարձությունները և դրանից հետո Հանրապետության Նախագահի հրապարակային խոսքը, որի ընթացքում Նախագահը վերոհիշյալ մեկնաբանությունների մասին խոսելիս դրանք անվանեց ծանր հանցագործություն, անհանգստության տարր սերմանեց նախընտրական քարոզարշավի մթնոլորտում:<sup>49</sup> Իշխանությունները չէշտեցին, որ խոսքի ազատությունը և մասնավոր հաղորդակցության գաղտնիությունը պաշտպանված են Հայաստանի

<sup>48</sup> Տես ԵԱՀԿ-ի 1990 թ. կոպենհագենյան փաստաթղթի 5.4 կետը. “...պետության և քաղաքական կուսակցությունների հստակ տարանջատում. մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չպետք է միահյուսվեն պետությանը”:

<sup>49</sup> ԵԱՀԿ-ի 1990 թ. կոպենհագենյան փաստաթղթի 7.7 կետը. “[Մասնակից պետությունները պետք է] ապահովեն, որպեսզի օրենքը և հանրային քաղաքականությունը նպաստեն քաղաքական քարոզչության՝ արդարացի և ազատ միջավայրում անցկացմանը, որում կուսակցությունների և թեկնածուների կողմից իրենց տեսակետների ազատ արտահայտմանը չպետք է խոչընդոտեն վարչական գործողությունները, բռնությունը կամ անարբեկումը...”:

Հանրապետության Սահմանադրությամբ՝ փոխարենը հայտարարելով, որ կիրականացվի քննություն:

Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից ոչ երկար ժամանակ առաջ և քարոզչության ընթացքում տեղի ունեցան որոշ բռնի դրվագներ, սակայն դրանց առնչությունն ընտրություններին կամ ընտրական պայքարին անպարզ էր, և դրանք, ըստ երևույթին, լուրջ ազդեցություն չթողեցին ամբողջ ընտրական մթնոլորտի վրա:

#### Գ. “ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔՆԵՐ”

Ընտրական օրենսգրքով թեկնածուներին և կուսակցություններին արգելվում է պաշտոնական նախընտրական քարոզչության ընթացքում ընտրողներին տալ կամ խոստանալ ապրանքներ կամ ծառայություններ:<sup>50</sup> դա սովորաբար անվանվում է “ընտրակաշառք”, սակայն չի որակվում որպես հանցագործություն: Գլխավոր դատախազը նշեց, որ նման դեպքերում քրեական մեղադրանք կարող է ներկայացվել կառաջի մասին օրենսդրական նորմերի հիման վրա, եթե հնարավոր լինի ապացուցել ընտրողների կամարտահայտության վրա ազդելու մտադրության առկայությունը, սակայն վկաները հակված չէին լինի համագործակցել, քանի որ այդ դեպքում անձամբ իրենք նույնպես կարող էին պատասխանատվության ենթարկվել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն ուղղակիորեն ականատես եղավ քաղաքական կուսակցություններից մեկի կողմից ապրանքների տրամադրման դրվագի, որը համապատասխանում էր նախընտրական քարոզչության ընթացքում արգելված վարքագծի իրավական բնորոշմանը:<sup>51</sup> Թիվ 25 ԸԸՀ-ում (Հրագրան) մեծամասնական թեկնածուներից մեկի օգտին աշխատող անձանցից մեկը մայիսի 9-ին ձեռքակալվեց ընտրակաշառք բաժանելու համար:<sup>52</sup>

Քարոզչության ընթացքում ընտրողներին նյութական շահագրգռում տրամադրելու վերաբերյալ բազմաթիվ հնչեցված մեղադրանքների և մի քանի հաստատված դեպքերի առկայությունը վկայում է, որ ապրանքների և ծառայությունների բնաիրեղեն հանգանակություններ են կատարվել որոշ կուսակցությունների և թեկնածուների քարոզարշավներին՝ թեկնածուների կամ այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից: Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում քարոզարշավին բնաիրեղեն հանգանակություններ կատարելու ուղղակի արգելք կամ դրանց բացահայտելու պահանջ: Այնուհանդերձ, ընտրակաշառքն արգելող

<sup>50</sup> Ընտրական օրենսգրքի 18.7 հոդված. “Նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ”:

<sup>51</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի տեղերում դիտարկումներ, Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնք, 2007 թ. ապրիլի 25:

<sup>52</sup> Տես նաև XIII.Գ բաժինը՝ “Այլ զարգացումներ”:



նորմը, ըստ երևույթին, պետք է որ կիրառելի լիներ այն իրավիճակների նկատմամբ, որոնցում թեկնածուները կամ կուսակցություններն “անձամբ կամ այլ եղանակով” նյութական շահագրգռում էին տրամադրում ընտրողներին:

“Բարգավաճ Հայաստան” կուսակցությունը հայտնի էր իր բարեգործական գործունեության, բնակչությանը նվերներ և ծառայություններ բաժանելու համար: ԿԸՀ-ի մայիսի 2-ի մամլո ասուլիսի ընթացքում արծարծվեց այդ կուսակցության գործունեության խնդիրը, որը տեղի էր ունեցել համայնքներին շտապ բուժօգնության մեքենաներ տրամադրելու տեսքով: ԿԸՀ-ի Նախագահը փաստարկ ներկայացրեց, թե այդ գործունեությունն իրականացվել է նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը, ինչպես նաև, որ հանգանակությունը կատարվել է ողջ համայնքին, այլ ոչ՝ անհատ ընտրողների, և ուստի չէր կարող համարվել ընտրակաշառք:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն նաև լսել էր մեղադրանքներ այն մասին, որ որոշ ընտրողներ ճնշման էին ենթարկվել՝ քվեարկելու որոշակի կուսակցությունների կամ թեկնածուների օգտին՝ վախենալով որոշակի հետևանքներից, օրինակ, աշխատանքից ազատվելուց: Մյուսիքի մարզում առաջադրված թեկնածուներից մեկը, որը նաև գործող պատգամավոր էր, հաստատեց, որ իրեն պատկանող խոշոր ձեռնարկությունում աշխատողները պարտավոր էին քվեարկել իր օգտին, սակայն ինքը դա բնութագրեց որպես ժամանակակից կորպորատիվ կառավարման համաշխարհային ոճին համահունչ մոտեցում:<sup>53</sup>

## VIII. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼԴԱՏՎԱՄԻՁՈՑՆԵՐԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում գործում է 61 հեռուստաալիք և 21 ռադիո ընկերություն,<sup>54</sup> ինչպես նաև ավելի քան 100 տպագիր մամուլի հրատարակում: Հեռուստատեսությունը տեղեկատվության ամենակարևոր և ամենաազդեցիկ միջոցն է: Հանրային հեռարձակող Հ1-ը սփռվում է Հայաստանի ողջ տարածքում, և առնվազն երեք մասնավոր հեռուստաալիքներ (*Հ2*, *Արմենիա* և *ԱԼՍ*) սփռվում են երկրի տարածքի մեծ մասում: Տպագիր մամուլը ներառում է պետության կողմից ֆինանսավորվող երկու թերթ՝ հայալեզու *Հայաստանի Հանրապետությունը* և ռուսալեզու *Ռեսպուբլիկա Արմենիի*, ինչպես նաև բազմաթիվ մասնավոր թերթեր: Այնուհանդերձ, փոքր տպաքանակի պատճառով (որևէ մեկ թերթի օրական տպաքանակը չի գերազանցում 6,000-ը) դրանց մեծ մասը հասանելի է միայն տեղական մակարդակով: Հաշվի առնելով գովազդային շուկայի սահմանափակ լինելը, որը դժվարություններ է առաջացնում լրատվամիջոցների համար՝

<sup>53</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի հանդիպումը թեկնածու Վահե Հակոբյանի հետ, ք. Կապան, Մյունիք, 2007 թ. մայիսի 5:

<sup>54</sup> Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, [www.tvradio.am](http://www.tvradio.am)

շահույթի մարժայի առումով, հատկապես մարզերում, լրատվամիջոցները հաճախ եկամուտներ են ստանում գործարար և քաղաքական աղբյուրներից:

Չնայած Հայաստանում գործող լրատվամիջոցների բավական մեծ թվին, հեռարձակվող լրատվամիջոցների կողմից ներկայացվող տեսակետների մեջ բազմազանության պակասը քննադատվել է խոսքի ազատությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի կողմից:<sup>55</sup> Լրատվամիջոցների իրավիճակի վրա ազդող գործոններից են լրատվամիջոցների խմբագրական կողմնորոշման վրա քաղաքական և գործարար շահերի ազդեցության բարձր մակարդակը, լրատվամիջոցների ֆինանսապես թույլ լինելը՝ գովազդի ցածր շահութաբերության հետևանքով, ինչպես նաև վերջին տարիներին լրագրողների դեմ ձեռնարկված դատական գործողությունները: Ավելին, մասնավոր «Ա1+» հեռուստաալիքը, որը զրկվել էր լիցենզիայից 2002 թ. անցկացված և հարցերի տեղիք տվող մրցութային գործընթացի հետևանքով (և արդեն իրավական բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան<sup>56</sup>) շարունակում է եթերազրկված մնալ՝ չնայած որ այն ժամանակից ի վեր նոր լիցենզիա ստանալու համար առնվազն 12 մրցութային հայտ է ներկայացրել:

#### Բ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Սահմանադրությամբ նախատեսվում է և խոսքի, և տեղեկատվության ազատությունը, և «Հեռուստատեսային և ռադիո հեռարձակման մասին» 2000 թ. օրենքով («Հեռարձակման մասին» օրենք) արգելվում է գրաքննությունը և նախատեսվում են նախընտրական քարոզչության մասին կանոններ: Ընտրական օրենսգիրքը հիմնական իրավական հիմքն է լրատվամիջոցներով նախընտրական քարոզչություն իրականացնելու վերաբերյալ:

Ընտրական օրենսգիրքը որոշ մանրամասներով կարգավորում է հեռարձակվող լրատվամիջոցների գործունեությունը նախընտրական քարոզչության պաշտոնական շրջանում: Դա ներառում է անվճար և վճարովի եթերաժամանակի տրամադրումն ընտրությունների բոլոր մասնակիցներին՝ հավասար պայմանների սկզբունքով: Համամասնական ընտրակարգով գրանցված յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք իրավունք ուներ հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով ստանալ համապատասխանաբար առավելագույնը 60 և 120 րոպե անվճար եթերաժամանակ, ինչպես նաև համապատասխանաբար առավելագույնը 120 և 180 րոպե վճարովի եթերաժամանակ: Պրակտիկայում դա նշանակում էր օրական երկու անվճար րոպե հեռուստատեսությամբ և չորս անվճար րոպե ռադիոյով, ինչպես նաև օրական երեքից ութ րոպե վճարովի եթերաժամանակ հեռուստատեսությամբ (օրական վճարովի եթերաժամանակը

<sup>55</sup> Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցիչ. «Լրատվամիջոցների ազատության վիճակը Հայաստանում», 2006 թ. հուլիսի 26, <http://www.osce.org/fom/documents.html?lsi=true&grp=297&limit=10&pos=10>

<sup>56</sup> Տվյալ պահի դրությամբ գործի քննությունը դեռ չի ավարտվել, և որոշումը դեռ չի կայացվել:

քարոզչության ընթացքում ավելացավ) և օրական վեց բուլետեն վճարովի եթերաժամանակ ռադիոյով:

Ընտրական օրենսգրքի պահանջի համաձայն, պաշտոնական ընտրական քարոզչության մեկնարկի առաջին օրը՝ ապրիլի 8-ին, ԿԸՀ-ն վիճակահանությամբ բաժանեց անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման հերթականությունը, և հեռարձակումները սկիզբ առան ապրիլի 10-ին: Չնայած որ հանրային լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ հետևեցին իրենց իրավական պարտավորություններին, հանրային ՀՂ հեռուստատեսությունը ԿԸՀ-ի համապատասխան որոշումը<sup>57</sup> մեկնաբանեց որոշակի ֆորմալիստական մոտեցմամբ: ՀՂ հեռուստատեսությունը որոշեց, որ քարոզչության համար նախատեսված բոլոր հատվածները կարող են օրվա ընթացքում հեռարձակվել մեկ կտորով՝ ԿԸՀ-ի սահմանած ժամկետում, որի մեծ մասը, սակայն, դուրս մնաց ամենաշատ դիտվող ժամերի (primetime) միջակայքից: ԿԸՀ-ն ստացավ երեք բողոք անվճար և վճարովի քարոզչության հեռարձակման համար հատկացված ժամերը փոխելու մասին: Դրանք բոլորը մերժվեցին<sup>58</sup> այն հիմնավորմամբ, թե նման փոփոխությունը, հաշվի առնելով որ հեռարձակումներն արդեն ընթացքի մեջ էին, կարող էր որոշակի անհարմարություն պատճառել ընտրողներին:

Ընտրությունների մասնակցող բոլոր ուժերն օգտագործեցին իրենց անվճար եթերաժամանակը:<sup>59</sup> Ապրիլի 19-ին մեծամասնական թեկնածու Թաթուլ Մանասերյանը ելույթ ունեցավ Հայաստանի Մարքսիստական կուսակցությանը հատկացված եթերաժամանակի ընթացքում: Քանի որ եթերաժամանակի փոխանցումը մեկ այլ կուսակցության կամ ներկայացուցչի արգելված է,<sup>60</sup> վերոհիշյալ կուսակցության գրանցումն Ընտրական օրենսգրքի հիման վրա կարող էր չեղյալ ճանաչվել,<sup>61</sup> սակայն ԿԸՀ-ն բավարարվեց ընդհանուր նախազգուշացմամբ:

Անվճար եթերաժամանակի պահանջներից գատ, օրենքը և հանրային, և մասնավոր լրատվամիջոցներին պարտավորեցնում է իրենց լրատվական ծրագրերում ներկայացնել անկողմնակալ և դատողություններից զերծ տեղեկատվություն ընտրությունների մասնակիցների նախընտրական քարոզչության վերաբերյալ, և ապահովել արդարացի և հավասար պայմաններ:<sup>62</sup> ԿԸՀ-ն վերահսկում է զանգվածային լրատվամիջոցները՝ ապահովելու համար քարոզչության հավասար հնարավորություններ, և իրավասու է խախտման դեպքում դատական բողոք ներկայացնել:<sup>63</sup> Հեռարձակվող լրատվամիջոցների կողմից իրավական

<sup>57</sup> ԿԸՀ-ի 2007 թ. ապրիլի 8-ի թիվ 84-Ա որոշում:

<sup>58</sup> 2007 թ. ապրիլի 19-ին և 30-ին:

<sup>59</sup> Ժողովրդական կուսակցությունը և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը չօգտագործեցին Հանրային ռադիոյով իրենց հասանելիք եթերաժամանակը:

<sup>60</sup> ԿԸՀ-ի թիվ 84-Ա որոշում:

<sup>61</sup> Ընտրական օրենսգրքի 18.8 և 103.1 հոդվածներ:

<sup>62</sup> Ընտրական օրենսգրքի 20.3 և 20.5 հոդվածներ:

<sup>63</sup> Ընտրական օրենսգրքի 41.1 և 45 հոդվածներ:

ընթացակարգերի պահպանումը մոնիտորինգի է ենթարկվում նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) կողմից, որը նույնպես իրավասու է խախտման դեպքում դիմել դատարան, իսկ ԿԸՀ-ն նման դեպքերում իրավասու է դատարանին ներկայացնել խախտման վերաբերյալ իր կարծիքը:<sup>64</sup>

Երկրի առաջատար մասնավոր հեռարձակողները վճարովի քաղաքական գովազդ հեռարձակելու ծառայություններ առաջարկեցին, սակայն որոշ տեղական հեռուստաալիքներ որոշեցին կամ ընդհանրապես չընդունել որևէ գովազդ, կամ վճարովի եթերաժամանակ տրամադրել միայն մեծամասնական ընտրակարգի համար: Համապետական հեռարձակողների գովազդի գնադրույքները տեղական չափանիշներով բարձր էին թվում. ամենաբարձր գինը՝ մեկ բոլայի դիմաց 130,000 դրամ (մոտ 260 եվրո), սահմանել էր “Արմենիա” հեռուստաալիքը, հատկապես եթե այդ գինը համեմատենք քարոզչության շրջանից դուրս գովազդի համար սահմանված սովորական գների հետ: Զգալի թվով քաղաքական ուժեր քննադատեցին այդ բարձր գները՝ դրանք համարելով արգելքային, ընդ որում, առաջարկվող ժամերը մեծ մասամբ ոչ այնքան գրավիչ ժամերի էին, այսինքն՝ նախքան 19:00: Ընտրությունների մասնակիցներից քչերն օգտվեցին վճարովի գովազդից:<sup>65</sup> Այն դեպքերում, երբ ընտրությունների մասնակիցներն օգտվում էին վճարովի գովազդից, որոշ հեռարձակողները երբեմն էկրանին չէին պատկերում “քաղաքական գովազդ” արտահայտությունը, իսկ վճարովի քարոզչության համար հատկացված որոշ բլոկեր հեռարձակվում էին առևտրային գովազդի համար նախատեսված ընդմիջումների ընթացքում: “Հեռարձակման մասին” օրենքի նշված խախտումներից ոչ մեկին վերահսկող մարմինները որևէ կերպ չարձագանքեցին:<sup>66</sup>

ԿԸՀ-ից ստացված տեղեկություններով,<sup>67</sup> ընդհանուր թվով 14 բողոք է ներկայացվել ընտրությունների հետ կապված հեռարձակվող նյութի բովանդակության վերաբերյալ, ընդ որում, բողոքները ներկայացվել են “Հանրապետություն”, “Օրինաց երկիր” և “Ժողովրդավարական ուղի” կուսակցությունների կողմից: ԿԸՀ-ն բողոքներից տասը մերժել է՝ այն հիմքով, որ օրենքը յուրաքանչյուր

<sup>64</sup> Ընտրական օրենսգրքի 20.9 հոդված:

<sup>65</sup> Վճարովի գովազդից օգտվող ընտրությունների մասնակիցների թիվը տատանվում էր՝ “Կենտրոն” հեռուստաալիքով այդ թիվը 5-էր, իսկ ՀՀ-ով՝ 9: Տվյալները ստացվել են ՀՌԱՀ-ից, 2007 թ. մայիսի 11:

<sup>66</sup> “Քաղաքական գովազդ” պիտակի բացակայության խնդիրն արձարծվել է ընտրությունների արդյունքների վերաբերյալ Մահմանադրական դատարան ներկայացված բողոքի շրջանակներում (տես ստորև): Հունիսի 4-5 նիստերի ընթացքում ԿԸՀ-ն ի վիճակի չէր հստակեցնել, թե ինչու այդ պիտակը կանոնավոր կերպով չի կիրառվել, փոխարենը նշելով, որ պիտակը պարտադիր է միայն վճարովի գովազդի համար: Դատարանն իր որոշման մեջ նշեց, որ իրավական պրակտիկայում չկա միասնական մոտեցում “Հեռարձակման մասին” օրենքի 11-րդ հոդվածի պահանջների կատարման նկատմամբ: Դա վերաբերում է, մասնավորապես, ընտրությունների շրջանում ԿԸՀ-ի և ՀՌԱՀ-ի կողմից իրենց վերահսկողական լիազորությունների բարեխիղճ կատարմանը:

<sup>67</sup> ԿԸՀ-ի ուսուկայք, [www.elections.am](http://www.elections.am), 22 մայիս, 2007 թ.:

լրատվամիջոցին թույլ է տալիս ինքնուրույն որոշել իր ծրագրերի բովանդակությունը: Մյուս չորս բողոքները փոխանցվել են ՀՌԱՀ-ին:<sup>68</sup> “Հանրապետություն” կուսակցության ներկայացրած բողոքը “լրության” ժամկետի խախտման վերաբերյալ փոխանցվել է գլխավոր դատախազություն: “Հանրապետություն” կուսակցության` ԿՀՀ-ին ուղարկած բողոքների մի մասը նույնպես առանձին ուղարկվել է ՀՌԱՀ-ին, որն այդ դեպքերից ոչ մեկով խախտում չի հայտնաբերել:<sup>69</sup>

#### Գ. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Մարտի 22-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն սկսեց մոնիտորինգի ենթարկել Երևանում գտնվող յոթ հեռուստատեսության կայանների և չորս օրաթերթերի գործունեությունը:<sup>70</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն գնահատեց, թե արդյոք լրատվամիջոցներն անկողմնակալ և հավասարակշիռ կերպով լուսաբանել են ընտրությունների մասնակիցների և պետական իշխանությունների գործունեությունը, և թե արդյոք քաղաքական ուժերը կարողացել են անարգել օգտվել լրատվամիջոցներից:

Նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի մի քանի զրուցակիցներ նշեցին, որ զգալի չափով մեղմացվել է խոշոր հեռուստատեսության կայանների` որոշ լուրերի համաձայն վաղուց կիրառվող խմբագրական այն քաղաքականությունը, որի համաձայն դրանք սահմանափակ չափով են լուսաբանել կամ ընդհանրապես չեն լուսաբանել ընդդիմադիր որոշ գործիչների

<sup>68</sup> 2007 թ. փետրվարին լրատվամիջոցների մասին օրենսդրությունը փոփոխվեց` այն 2005 թ. հաստատված սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով: Նախկինում ՀՌԱՀ-ը, որը նաև լիցենզիաներ տրամադրելու լիազորություն ունի, կազմված էր ինը անդամներից, որոնց բոլորին նշանակում էր Հանրապետության Նախագահը, սակայն փետրվարին կատարված փոփոխություններով փոխվեց Հանձնաժողովի կազմավորման կարգը` այնպես, որ երբ փոփոխությունները լիովին ուժի մեջ մտնեն, կազմն ավելի բազմազան կլինի` ներառելով ութ անդամ, որոնցից չորսը նշանակված կլինեն Նախագահի, իսկ մյուս չորսը` Խորհրդարանի կողմից: ՀՌԱՀ-ի լիազորությունները տարածվում են մասնավոր հեռարձակողների նկատմամբ: Գոյություն ունի նաև Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդ` հանրային լրատվամիջոցների գործադիր մարմինը, որի բոլոր հինգ անդամներն ուղղակիորեն նշանակվում են Նախագահի կողմից: Տպագիր լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմին գոյություն չունի:

<sup>69</sup> Տեղեկությունները տրամադրվել են ՀՌԱՀ-ի կողմից 2007 թ. մայիսի 11-ին:

<sup>70</sup> ԸԴԱ-ն քանակական և որակական վերլուծությունների հիման վրա մարտի 22-ից մինչև մայիսի 10-ի դիտարկել է հետևյալ լրատվամիջոցները. հանրային 21 հեռուստատեսությամբ, “ԱԼՄ”, “Արմենիա”, “Հ2”, “Կենտրոն”, “Շանթ” և “Երկիր մեդիա” հեռուստատեսությամբ, Հանրային ռադիոն, Ազատություն ռադիոկայանը, պետության կողմից ֆինանսավորվող “Հայաստանի Հանրապետություն” թերթը և “Առավոտ”, “Ազգ” և “Հայկական ժամանակ” թերթերը: Լրատվամիջոցների մոնիտորինգի ծրագրեր են իրականացրել նաև երկու տեղական կազմակերպություններ` Երևանի մամուլի ակումբը և Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտը:

գործունեությունը:<sup>71</sup> Վարչապետ Մարգարյանի մահը ստվերեց ընտրական զարգացումների լուսաբանումը պաշտոնական քարոզչության մեկնարկից առաջ:

Պաշտոնական քարոզչության մեկնարկին նախորդող ժամանակահատվածում քարոզչության իրականացումը կարգավորող նորմերի բացակայությունը<sup>72</sup> նկատելի էր նաև լրատվամիջոցներում: Պաշտոնական քարոզչության մեկնարկից առաջ առնվազն երեք հեռուստաալիքներ հեռարձակեցին քաղաքական նյութեր՝ Ժողովրդական կուսակցությունը<sup>73</sup> (“ԱԼՄ” հեռուստաալիք), “Բարգավաճ Հայաստան” կուսակցությունը (“Կենտրոն” և “Հրազդան” հեռուստաալիքներ) և Միավորված աշխատանքային կուսակցությունը (“ԱԼՄ” հեռուստաալիք) գովազդող ուղերձներով:

Պաշտոնական քարոզչության ժամանակահատվածի մեկնարկից հետո նկատելի չափով ավելացավ լրատվամիջոցների կողմից քարոզչության իրադարձություններին դարձվող ուշադրությունը և ընտրությունների մասնակիցների տեսանելիությունը: Էլեկտրոնային լրատվամիջոցներն իրենց լուրերի երեկոյան թողարկումների, ընթացիկ իրադարձություններին նվիրված հաղորդումների և տարբեր թոքշոունների և հարցազրույցների ժամանակ ընտրողներին ընդարձակ կերպով ներկայացնում էին քաղաքական և ընտրական իրադարձությունները: “Երկիր մեդիա”-ն, համագործակցելով Երևանի մամուլի ակումբի հետ, միջազգային օժանդակությամբ, կազմակերպեց համապետական նախընտրական բանավեճերի պարբերական շարք:<sup>74</sup>

Ընդհանուր առմամբ, համապետական լրատվամիջոցներից շատերը (թե Երևանում, թե երկրի այլ մասերում) տեսանելի ջանքեր գործադրեցին՝ լուսաբանելու քաղաքական դերակատարների լայն շրջանակ և այդ կերպ կատարելու հավասար պայմաններ ապահովելու մասին իրավական նորմերի պահանջները: Միաժամանակ, մոնիտորինգի ենթարկված հեռուստաալիքների մեծ մասը լրատվական թողարկումներում քաղաքական տեղեկատվության ամենամեծ մասնաբաժինը նվիրում էին Կառավարության<sup>75</sup> և երեք քաղաքական

<sup>71</sup> 2007 թ. մայիսի 14-ին 19 հասարակական կազմակերպություններ հանդես եկան հրապարակային հայտարարությամբ: Ընդունելով, որ նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածի ընթացքում լրատվամիջոցների հասանելիությունը որոշ չափով բարելավվել է, նրանք միաժամանակ մտահոգություն հայտնեցին լրատվամիջոցների և հավաքների ազատության վերաբերյալ՝ քարոզչության մեկնարկից առաջ այս ոլորտում իրենց դիտարկումների և արձանագրած պրոբլեմների ու խախտումների հիման վրա:

<sup>72</sup> Տես VII.Ա բաժին՝ “Նախընտրական քարոզչության իրավական դաշտը”:

<sup>73</sup> Ժողովրդական կուսակցության ղեկավար Տիգրան Կարապետյանը “ԱԼՄ” հեռուստաալիքի սեփականատերն է:

<sup>74</sup> “Համապիտուտ” հեռուստատեսային ցանցը, որը կազմված է մարգարյան մի քանի հեռուստաալիքներից, նույնպես հեռարձակեց նախընտրական բանավեճեր:

<sup>75</sup> Նախագահ Քոչարյանի որոշ հրապարակային ելույթներ և հանդիպումներ նույնպես ընդարձակ կերպով լուսաբանվեցին, ներառյալ նրա ապրիլի 27-ի ելույթը Երևանի

կուսակցությունների՝ Հանրապետական, “Բարգավաճ Հայաստան” և ՀՀԴ կուսակցությունների գործունեությանը: Տեղական լրատվամիջոցները շատ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում տեղական ընտրապայքարին, այդ թվում՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող անհատներին:

Հեռուստատեսությամբ Կառավարության գործունեության լուսաբանումը ներառում էր առաջնահերթ կերպով Վարչապետ Սերժ Սարգսյանին ներկայացնելը: Մարզերում պրն. Մարգարյանի հրապարակային հանդիպումների և ելույթների՝ լրատվամիջոցների կողմից ներկայացման ձևը, որի շրջանակներում հաճախ հստակորեն չէին սահմանազատվում նրա՝ որպես Վարչապետի, և նրա՝ որպես Հանրապետական կուսակցության առաջնորդի դերերը, վկայեց ավելի ընդհանուր բնույթի խնդրի առկայության մասին, այն է՝ պաշտոնատար անձանց կողմից իրականացվող քարոզչության և լրատվամիջոցներով դրա լուսաբանման վերաբերյալ իրավական նորմերը դժվար է կիրառել և կիրարկել: Նույն խնդիրն ավելի պակաս չափով վերաբերում է նաև Կառավարության դաշնակցական նախարարների գործունեության լուսաբանմանը հեռուստատեսությամբ:

Ընտրությունների մասնակիցների գործունեությունը լուսաբանելիս լրատվամիջոցները գլխավորապես ուշադրություն էին դարձնում փաստացի խնդիրների և հարցերի վերաբերյալ քաղաքական առաջատար դեմքերի դիրքորոշումներին և նրանց նախկին նվաճումներին, այլ ոչ՝ նրանց ներկայացրած քաղաքական ուժերի քաղաքական տեսակետներին կամ ծրագրերին: Միաժամանակ, հեռուստաալիքներն իրենց հիմնական լրատվական թողարկումներում ներկայացնում էին բացահայտաբար դրական և չեզոք տեղեկություններ՝ նվազագույնի հասցնելով քննադատական մեկնաբանությունները կամ բացասական տեղեկությունները: Այնուամենայնիվ, որոշ կուսակցություններ իրենց անվճար և վճարովի եթերաժամանակն օգտագործեցին քննադատական ուղերձներ հաղորդելու համար: Խոսքի ազատության ոլորտում առկա միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ կարծիքների թե՛ փոխանակումն ընդունելը կարող է նպաստել բազմակարծությանը և, որպես կանոն, պետք է ժողովրդավարական հասարակությունում հանդուրժվի: Դա հատկապես կարևոր է նախընտրական քարոզչության շրջանում, երբ ուշադրությունը սևեղծվում է կառավարական մարմինների, ընտրված պաշտոնյաների և թեկնածուների ուղղությամբ:<sup>76</sup>

Լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ պահպանել են “լռության” ժամկետը, որը մեկնարկել է քվեարկության օրվանից 24 ժամ առաջ. նկատված միակ բացթողման հեղինակը “Հայոց աշխարհ” թերթն էր, որը մայիսի 11-ին հրապարակել էր “Հանրապետական” կուսակցության գովազդային նշաններ կրող նյութեր:

պետական համալսարանում և մայիսի 10-ին երեք խոշոր հեռուստաալիքների տնօրենների հետ ունեցած հանդիպումը:

<sup>76</sup> “ԵԱՀԿ-ի մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների ոլորտում առկա հանձնառություններ”, Վարչապետ, 2003 թ. հոկտեմբեր, էջեր 69-70, [http://www.osce.org/documents/odhr/2003/10/772\\_en.pdf](http://www.osce.org/documents/odhr/2003/10/772_en.pdf)

**Հանրային հեռարձակողները. Հ1 և Հանրային ռադիո**

Պաշտոնական քարոզչության մեկնարկից ևեթ հանրային երկու հեռարձակողները փորձել են խմբագրական այնպիսի դիրքորոշում պահպանել, որը կերաշխավորի հավասար պայմաններ ընտրությունների մասնակիցներին՝ որդեգրելով հիմնականում խոշոր կուսակցությունների, խորհրդարանում ներկայացվածների և ակտիվ քարոզարշավ իրականացնողների գործունեությունը լուսաբանելու սկզբունքը: *Հանրային ռադիոն* իր հիմնական երեկոյան լրատվական ծրագրի ընթացքում ունկնդիրներին ներկայացրել է հավասարակշիռ քաղաքական լուսաբանում՝ թե եթերաժամանակի, թե տոնի առումով: *Հանրային ռադիոյի* քաղաքական լուսաբանման ամենամեծ մասը բաժին է ընկել Հանրապետական կուսակցությանը (11 տոկոս), «Օրինաց երկիր» կուսակցությանը (9 տոկոս) և Հայաստանի ժողովրդական կուսակցությանը (9 տոկոս):

Հանրային հեռուստատեսությունն (ՀՏ) իր լրատվական ծրագրի ընթացքում ներկայացրել է մի շարք քաղաքական դերակատարների՝ քաղաքական լուսաբանման ամենամեծ մասը բաժին հանելով Կառավարությանը՝ 17 տոկոս (պաշտոնական քարոզչության մեկնարկից առաջ այս ցուցանիշը 43 տոկոս էր) հիմնականում չեզոք և դրական տոնով: ՀՏ-ը միակ հեռարձակողն էր, որն ամենաշատ ուշադրություն դարձրեց կառավարամետ կուսակցություն չհանդիսացող ուժերին՝ իր լուսաբանման 12 տոկոսը բաժին հանելով Հայաստանի ժողովրդական կուսակցությանը և 10 տոկոսը՝ «Ազգային միաբանություն» կուսակցությանը (ինչ վերաբերում է կառավարամետ կուսակցություններին, ապա դրանցից ամենաշատ լուսաբանվեց ՀՀԴ-ն՝ 10 տոկոս): Ներկայացված տեղեկությունների ճնշող մեծամասնությունը դրական և չեզոք տոն ուներ:

Այնուհանդերձ, «Օրինաց երկիր» կուսակցության գործունեության լուսաբանումը ՀՏ-ի կողմից հարցականի տակ դրեց այն, թե արդյոք տվյալ կուսակցության նկատմամբ տվյալ ալիքի որակական մոտեցումն իսկապես անկողմնակալ է եղել: «Գոլոս Արմենիի» օրաթերթում Արթուր Բաղդասարյանի մասին հոդվածներից առաջինի հրապարակումից հետո<sup>77</sup> ՀՏ-ը միակ հեռուստաալիքն էր, որն իր հիմնական լրատվական հաղորդման մեջ բառացի ներկայացրեց այն՝ բաց թողնելով, սակայն, Հանրապետության Նախագահի մասին արված մեկ բացասական մեկնաբանություն: Ավելի ուշ ՀՏ-ը նաև լուսաբանեց, առնվազն երկու անգամ, Հանրապետության Նախագահի հրապարակային խոսքը վերոհիշյալ կուսակցության նախագահի՝ մասնավոր գրույցում հայտնած մտքերի վերաբերյալ: Չնայած կարևոր իրադարձությունների մասին հանրությանը տեղեկացնելու խմբագրական ազատությանը, ՀՏ-ը չպահպանեց լրագրողի մասնագիտական չափանիշները՝ չներկայացնելով որևէ պատասխան «Օրինաց երկիր» կուսակցության կողմից:

<sup>77</sup> Տես VII.Բ բաժինը՝ «Քարոզչության իրականացումը»:



Բացի այդ, ՀՀ-ի կողմից և նախընտրական, և հետընտրական շրջանում ընդդիմադիր որոշ ուժերի, այդ թվում՝ «Ժառանգություն» և «Հանրապետություն» կուսակցությունների, «Իմպիչմենթ» դաշինքի և «Նոր ժամանակներ» կուսակցության գործունեության լուսաբանման որոշ տարրեր, որոնք հիմնականում ներկայացվում էին մեկ լրագրողի կողմից, տարբեր տեսակետներն առանց կողմնապահության ներկայացնելու հարցում տվյալ հեռուստատալիքի օբյեկտիվության և անկողմնակալության վերաբերյալ մտահոգության տեղիք տվեցին:

### Մասնավոր ալիքները

Նմանապես, համապետական սփռում ունեցող բոլոր մասնավոր հեռուստատալիքների, այդ թվում՝ ՀՀ-ի, «Արմենիա»-ի և «ԱԼՄ»-ի լրատվական հաղորդումներում, ըստ մոնիտորինգի, լուսաբանված քաղաքական սուբյեկտների թվում ամենամեծ մասը բաժին էր հասել Կառավարությանը. ՀՀ-ը, օրինակ, Կառավարությանն էր հատկացրել իր քաղաքական լուսաբանման 26 տոկոսը: Ավելին, բոլոր ալիքները հեռուստադիտողներին ներկայացնում էին Կառավարության գրեթե բացառապես դրական և չեզոք պատկեր: Բացի իշխանությունների գործունեությունը լուսաբանելուց, մոնիտորինգի ենթարկված մասնավոր հեռուստատալիքներն իրենց քաղաքական լուրերի թողարկումների ամենամեծ մասը բաժին էին հանել Հանրապետական կուսակցությանը («Արմենիա» և ամենամեծ բաժինը՝ «ԱԼՄ»-ում, 21 տոկոս), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը (ՀՀ, «Շանթ» և ամենամեծ բաժինը՝ «Կենտրոն» հեռուստատալիքում՝ 23 տոկոս) և ՀՀԴ-ին («Երկիր մեդիա»՝ 41 տոկոս): Նշված կուսակցությունների մասին շատ կարևոր տեղեկություններ գրեթե իսպառ բացակայել են: Որոշ մասնավոր հեռուստատալիքներ հստակորեն արտահայտել են իրենց խմբագրական կողմնորոշումը՝ լրատվական հաղորդումներից գատ այլ ծրագրերում գովաբանելով կոնկրետ կուսակցություններ կամ անհատների. օրինակ, «ԱԼՄ»-ով Ժողովրդական կուսակցությունը գովաբանող կանոնավոր թոքշոունները կամ «Երկիր մեդիա»-ով ժամանակ առ ժամանակ ՀՀԴ-ի պատմական անցյալը ներկայացնող վավերագրական ֆիլմերի ցուցադրումը:

Միայն ռադիո կայանները, ընդ որում՝ հիմնականում «Ազատություն» ռադիոկայանը, հեռարձակեցին քննադատական տեսակետները, որոնք պարբերաբար հնչեցվել էին ընտրությունների տարբեր մասնակիցների և ընտրողների կողմից, հաճախ հեռարձակելով նաև ընդհանուր առմամբ բավական բացասական մեկնաբանություններ քաղաքական զարգացումների վերաբերյալ:

### Տպագիր մամուլը

Մոնիտորինգի ենթարկված տպագիր մամուլն ընթերցողներին մատուցել էր կարծիքների լայն բազմազանություն, ներառյալ քննադատական մեկնաբանություններ, ներկայացնելով զանազան քաղաքական ուժեր և մեծամասնական թեկնածուների: Այնուհանդերձ, տպագիր մամուլը հաճախ դրսևորում էր ոչ հավասարակշիռ մոտեցում: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը դրսևորեց ակնհայտորեն նախապատվելի վերաբերմունք

իշխանությունների և Հանրապետական կուսակցության նկատմամբ՝ նրանց բաժին հանելով գրեթե բացառապես դրական և չեզոք տեղեկատվության ընդհանուր առմամբ ավելի քան 62 տոկոսը: Մասնավոր “Հայկական ժամանակ” օրաթերթի կողմից ներկայացվող պատկերը քանակական առումով հավասարակշռված էր, սակայն այս օրաթերթն իր տոնի առումով ակնհայտ կողմնակալություն էր դրսևորում հոգուտ “Իմպիչմենթ” դաշինքի: Վերջինիս նկատմամբ տոնը դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում դրական էր և չեզոք՝ միաժամանակ բացասական լինելով իր հակառակորդների մեծ մասի նկատմամբ: “Ազգ” օրաթերթն ամենաշատ ուշադրություն դարձրեց “Բարգավաճ Հայաստան” կուսակցությանը (28 տոկոս): Առավել հավասարակշիռ և վերլուծական լուսաբանում դիտարկվեց “Առավոտ” օրաթերթի գործունեության մեջ:

## IX. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

### Ա. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընտրական օրենսգիրքը քաղաքական կուսակցություններին, դաշինքներին և թեկնածուներին թույլատրում է դատական կարգով բողոքներ ներկայացնել ընդդեմ ընտրական հանձնաժողովների գործողությունների կամ անգործության: Ընտրական վեճերը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն համարվում են քաղաքացիական գործեր, որոնք քննելու իրավասությունը պատկանում է առաջին ատյանի դատարաններին: Դրա պատճառն այն է, որ “Նորմատիվային ակտերի մասին” օրենքի համաձայն, Ընտրական օրենսգրքի նկատմամբ գերակա է համարվում Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, քանի որ վերջինս ավելի վաղ է ընդունվել,<sup>78</sup> և Ընտրական օրենսգրքի հետ առկա է տարաձայնություն, քանի որ Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ ԿԸՀ-ի գործողությունները ենթակա են բողոքարկման վերաքննիչ դատարանում,<sup>79</sup> իսկ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսվում է, որ ընտրությունների հետ կապված գործերը պետք է քննվեն առաջին ատյանի դատարանում:<sup>80</sup>

Ընտրական օրենսգրքով և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ընտրությունների հետ կապված վեճերի վերաբերյալ դրույթներով սահմանվում է, որ ընտրությունների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները

<sup>78</sup> “Նորմատիվային ակտերի մասին” օրենք, 24.3 հոդված:

<sup>79</sup> Բացառությամբ ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված բողոքների, որոնք ներկայացվում են Սահմանադրական դատարան, տես Ընտրական օրենսգրքի 40.3 հոդված:

<sup>80</sup> Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի դրույթների սահմանադրականությունը վիճարկվել էր Սահմանադրական դատարանում: Դատարանը 2007 թ. մայիսի 8-ին մերժեց բողոքը, տես Սահմանադրական դատարանի CCD-700 որոշումը, 2007 թ. մայիսի 8:

վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: Այնուհանդերձ, մայիսի 3-ին բողոքների վերաբերյալ կայացված վեց որոշումներում առաջին ատյանի դատարանները տրամադրել են վերաքննության իրավունք՝ մեջբերելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի տարբեր դրույթներ: Դատարանի պաշտոնական բացատրությունն այն էր, որ գործում են ոչ թե ընտրական իրավունքի վերաբերյալ դրույթները, այլ՝ “պետական մարմնի”<sup>81</sup> գործողությունների վերաբերյալ իրավական դրույթները:

#### Բ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19-րդ ԸԸՀ-ում (Վաղարշապատ) թեկնածուներ Հակոբ Ռաֆիկի Հակոբյանի և Սուսաննա Հարությունյանի գրանցումն անվավեր է ճանաչվել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի ապրիլի 10-ի որոշմամբ՝ նույն ընտրատարածքում մեկ այլ թեկնածուի ներկայացրած բողոքի հիման վրա: Բողոքաբերը պնդում էր, որ վերոհիշյալ երկու թեկնածուները գրանցվել են՝ խախտելով “քաղաքացիական նախաձեռնությամբ” առաջադրվողների դիմումների վերաբերյալ պահանջը, որի համաձայն դիմումները պետք է ուղեկցվեն իրենց առաջադրած նախաձեռնող խումբ ստեղծելու համար անհրաժեշտ բոլոր 50 անդամների ստորագրություններով:

Ազգային ժողովի ընտրությունների թեկնածուները պետք է ներկայացնեն “Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագիր”:<sup>82</sup> Թիվ 29 ԸԸՀ-ում (Սպիտակ) թեկնածու Վարդան Մաղաթյանը ԸԸՀ-ին բողոք ներկայացրեց՝ պահանջելով անվավեր ճանաչել մրցակից թեկնածու Արկադի Համբարձումյանի գրանցումը՝ այն հիմքով, որ գործող պատգամավոր Համբարձումյանը քարոզչական նյութերում հայտարարել էր, թե 2007 թ. տարեսկզբին երեք համայնքների բարեգործական հանգանակությունն է կատարել 44.5 միլիոն դրամ ընդհանուր գումարով, և թե մարզում ֆինանսավորել է զարգացման տարբեր ծրագրեր՝ 123.6 միլիոն դրամ ընդհանուր արժողությամբ: Այնուհանդերձ, նրա ֆինանսական հայտարարագրում 2006 թ. համար ներկայացված եկամուտը կազմել էր 3 միլիոն դրամից մի փոքր ավելի: ԸԸՀ-ն ի վերջո մերժեց բողոքը՝ այն հիմքով, թե տվյալ հանգանակությունները չեն կատարվել հաշվետու ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում: Բողոքարկման ժամանակ առաջին ատյանի դատարանը եզրակացրեց, որ չկան ապացույցներ առ այն, որ հանգանակությունները հակասում էին թեկնածուի՝ այդ ժամանակ ունեցած ֆինանսական միջոցներին:

<sup>81</sup> Այս դեպքում տվյալ պետական մարմինը ԿԸՀ-ն էր:

<sup>82</sup> Ընտրական օրենսգրքի 101.1 հոդված համամասնական ցուցակներում ընդգրկված թեկնածուների և 108.2.5 հոդված՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցող թեկնածուների համար:

Թիվ 39 ԸՀ-ն (Վայոց Ձոր) ստացավ բողոք այն մասին, որ թեկնածուներից մեկը քարոզչական ցուցանակում ներառել է Հայաստանի դրոշը՝ խախտելով Ընտրական օրենսգիրքը. բողոքաբերը պահանջում էր անվավեր ճանաչել նշված թեկնածուի գրանցումը: ԸՀ-ն գտավ, որ տվյալ ցուցանակում ներառված առարկան Հայաստանի դրոշ չէր: Դիմումատուն՝ մրցող թեկնածուն, ԸՀ-ի որոշման դեմ բողոք ներկայացրեց առաջին ատյանի դատարան, որը վճռեց, որ ԸՀ-ի որոշումն այն մասին, որ տվյալ առարկան դրոշ չէ, սխալ է, սակայն բողոքը մերժեց այն հիմքով, որ միայն ԸՀ-ն, բայց ոչ՝ դիմումատուն, իրավունք ունի դիմել դատարան թեկնածուներից որևէ մեկի գրանցումն անվավեր ճանաչելու հայցով: Այս վճիռն ընդգծեց դատարանների որոշումների միջև հակասությունների առկայության փաստը. թիվ 19 ԸՀ-ի հետ կապված դեպքում դատարանն առանց որևէ վերապահման վարույթ էր ընդունել թեկնածու Հակոբ Վարշամի Հակոբյանի դիմումն ընդդեմ երկու մրցակիցների:

#### Գ. ԱՅԼ ԲՈՂՈՔՆԵՐ

ԿԸՀ-ն և ԸՀ-ներն Ընտրական օրենսգրքի համաձայն լիազորված են վերանայել ստորադաս ընտրական հանձնաժողովների գործողությունները: Այս առումով նկատելի պակասուրդ արձանագրվեց՝ պայմանավորված ընտրական մարմինների և կարգավորիչ դաշտի պահանջների կատարման համար պատասխանատու այլ մարմինների ակնհայտ պասիվությամբ և նախաձեռնության բացակայությամբ, որոնք նշում էին, թե իրենք գործողություններ կձեռնարկեն միայն պաշտոնապես բողոք ստանալու դեպքում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն տեղեկացվեց ԿԸՀ մուտքագրված 62 բողոքների մասին: Դրանք, մասնավորապես, վերաբերում էին քարոզչական ցուցանակների համար տեղերի հատկացմանը, քարոզչության հեռարձակումների համար նախատեսված ժամերին, լրատվամիջոցների կողմից քարոզչության ընթացակարգերի խախտումներին և ընտրացուցակների ստույգության հետ կապված խնդիրների: ԿԸՀ-ն մերժեց բողոքների մեծ մասը դրանք քննելու իրավասություն չունենալու կամ դրանց՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, քանի որ կուսակցությունները կամ թեկնածուները հաճախ ի վիճակի չէին ներկայացնել իրենց բողոքները հիմնավորող լուրջ ապացույցներ: ԿԸՀ-ին ուղղված ցանկացած բողոքի ուղարկվել է պաշտոնական պատասխան, որում արտացոլված է եղել ԿԸՀ-ի դիրքորոշումը, չնայած որ այդ պատասխանը չի բնութագրվել որպես ԿԸՀ-ի “որոշում”:

Չնայած որ ԿԸՀ-ի ստացած բողոքները քննվել են ընդհանուր առմամբ թափանցիկ պայմաններում, ԿԸՀ-ի պաշտոնական պատասխաններից մի քանիսը բավարար չափով պատճառաբանված չեն եղել: Օրինակ, պատասխանելով “Օրինաց երկիր” կուսակցության բողոքին այն մասին, որ համայնքապետերից մեկը խախտել է պետությանը պատկանող տարածքը նախընտրական հանդիպման անցկացման

համար անվճար տրամադրելու պահանջը<sup>83</sup> (պահանջելով 100,000 դրամ վճարել<sup>84</sup>), ԿԸՀ-ն ապրիլի 12-ին հայտարարեց, որ պետական գույք նշանակում է կենտրոնական կառավարությանը, այլ ոչ՝ տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույք:<sup>85</sup> Այնուհանդերձ, դա հակասում էր քարոզչության ընթացքում արդեն լայնորեն տեսանելի պրակտիկային:

Մեկ այլ օրինակ էր ԿԸՀ-ի պատասխանը թիվ 14 ԸԸՀ-ում (Աշտարակ) առաջադրված մեծամասնական թեկնածուին, որը գտնվում էր նախնական կալանքի տակ և որպես թեկնածու գրանցվելու ընթացքում բողոքարկում էր կալանքը երկարաձգելու մասին որոշումը: ԿԸՀ-ն բացատրեց, որ քանի որ կալանքը սկսվել էր 2006 թ. դեկտեմբերին, ԿԸՀ-ն իրավասու չէր «վետո»-ի ենթարկել դատարանի որոշումը: ԿԸՀ-ն իր այս որոշումը պատշաճ կերպով չպատճառաբանեց: Հաշվի առնելով, որ կալանքի երկարաձգման մասին որոշումը կայացվել էր ապրիլի 5-ին, և որ Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ մեծամասնական թեկնածուն կարող է կալանավորվել կամ դատարան տարվել միայն ԿԸՀ-ի համաձայնությամբ, տվյալ դեպքը կարող էր համարվել գործ, որի նկատմամբ տարածվում էր ԿԸՀ-ի իրավասությունը:

Փոքր թվով բողոքներ ներկայացվեցին ԸԸՀ-ներին, որոնք չբավարարվեցին: Դրանք վերաբերում էին, մասնավորապես, թեկնածուների գրանցումն անվավեր ճանաչելու՝ ինչպես արդեն նշվեց, ՏԸՀ-ի տարածքում ընտրողների ցուցակի բացակայությանը և նախընտրական շտաբի համար տարածքների հատկացմանը:<sup>86</sup> Առաջին ատյանի դատարանների ստացած և ԿԸՀ-ի անգործությունը բողոքարկող ավելի քան 20 բողոքները<sup>87</sup> նույնպես մերժվեցին:

Դատախազները նույնպես որոշակի դերակատարում ունեցան ընտրական գործընթացին առնչվող բողոքներ քննելու գործում: Ընտրական շրջանում Գլխավոր դատախազը ձևավորեց երկու աշխատանքային խումբ, որոնցից առաջինը պետք է ուսումնասիրեր ընտրախախտումների վերաբերյալ հայտարարությունները, իսկ մյուսը՝ վերահսկեր նման դեպքերի կապակցությամբ անցկացվող քննությունը: Գլխավոր դատախազը չորս հաշվետվություն

<sup>83</sup> Ընտրական օրենսգրքի 18.1 հոդված. «Նախընտրական քարոզչությունն իրականացվում է հավասար հիմունքներով: Այն ապահովում են պետական մարմինները ... նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք ... տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար...»:

<sup>84</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն տեսել է Սպիտակի քաղաքապետարանից «Օրինաց երկիր» կուսակցությանն ուղղված նամակի կրկնօրինակը, որով պահանջվում էր 100,000 դրամ (մոտավորապես 200 եվրո) նախընտրական հանդիպման համար տարածք տրամադրելու դիմաց:

<sup>85</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70.2 հոդված:

<sup>86</sup> ԸԸՀ 17 (Արտաշատ):

<sup>87</sup> Բողոքների մեծ մասը ներկայացվել է «Գերագույն խորհուրդ» ՀԿ-ի և «Հանրապետություն» կուսակցության կողմից:

հրապարակեց, որոնցում թվարկվում էին Գլխավոր դատախազությանը գրավոր կերպով ներկայացված 30 գործերը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներից ստացված 30 հայտարարությունները:

## X. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի իրավական դաշտը նախատեսում է հավասարություն տղամարդկանց և կանանց միջև, այդ թվում՝ Սահմանադրության համապատասխան դրույթը, որով արգելվում է խտրականությունը:<sup>88</sup> Ավելին, Հայաստանն ընդունել է “Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման գործողությունների 2004-2010 թթ. ազգային ծրագիր”: Այնուամենայնիվ, կիրարկման և մոնիտորինգի արդյունավետ և լիարժեք մեխանիզմներ չկան:

2007 թ. ընտրությունները տեղի ունեցան այնպիսի պայմաններում, որ շատ քիչ թվով կանայք էին գործադիր կամ որոշում կայացնողի պաշտոններ զբաղեցնում հասարակական և քաղաքական կյանքում: Նախորդ գումարման խորհրդարանում 131 պատգամավորներից յոթն (այսինքն, 5.3 տոկոսն) էին կանայք, իսկ Կառավարությունում՝ 16 նախարարներից միայն մեկն էր կին:<sup>89</sup>

2003 թ. խորհրդարանական ընտրություններից հետո ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը խորհուրդ էր տվել Հայաստանին “ավելացնել կանանց մասնակցությունն ընտրական գործընթացում և, հատկապես, բարելավել կանանց ներկայացվածությունը թեկնածուների թվում և խորհրդարանում”:<sup>90</sup> Փոփոխված Ընտրական օրենսգրքի 100.2 հոդվածով այժմ պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր կուսակցության կամ դաշինքի ցուցակում ընդգրկված անձանց 15 տոկոսը կանայք լինեն, ընդ որում՝ առնվազն յուրաքանչյուր տասերորդը լինի կին: 41 մեծամասնական ընտրատարածքներում առաջադրված 119 թեկնածուներից ընդամենը 5-ն էին կանայք, որոնք մրցում էին 3 ընտրատարածքներում:<sup>91</sup>

Հայաստանում գերակա է ավանդական գենդերային դերերի վերագրումը, և քաղաքականություն մուտք գործելու փորձ կատարելիս կանանց անհրաժեշտ է զգալի օժանդակություն: Երկու հասարակական կազմակերպություններ<sup>92</sup> առաջնորդության դասընթացներ են կազմակերպում քաղաքացիական հասարակությունը և քաղաքական կուսակցություններ ներկայացնող կանանց

<sup>88</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1 հոդված:

<sup>89</sup> 2003 թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների և դաշինքների ցուցակների նկատմամբ կիրառվել էր կանանց 5 տոկոսի ընդգրկման քվոտա:

<sup>90</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկույցը Հայաստանի 2003 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ, առկա է հետևյալ կայքով.  
[http://www1.osce.org/documents/odihr/2003/07/533\\_en.pdf](http://www1.osce.org/documents/odihr/2003/07/533_en.pdf)

<sup>91</sup> Մեկը՝ 11-րդ ԸԸՀ-ում (Շենգավիթ, Երևան), երկուսը՝ 12-րդ ԸԸՀ-ում (Շենգավիթ, Երևան), և երկուսը՝ 31-րդ ԸԸՀ-ում (Վանաձոր-Ալավերդի):

<sup>92</sup> NDI և “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա”:

համար: Ընտրություններում որպես թեկնածու առաջադրված մի շարք կանայք մասնակցել են նշված ծրագրին: Քարոզչության ժամանակահատվածում “Կանանց դաշինք” ՀԿ-ն կազմակերպեց տարբեր կուսակցություններ ներկայացնող կին թեկնածուների երկու բանավեճեր, որոնց մասնակցեցին մոտ 1,000 հոգի, և որոնք հեռարձակվեցին հանրապետության ողջ տարածքով հեռարձակվող հեռուստատեսությամբ: “*ArmeniaNow*” անկախ շաբաթաթերթը 2007 թ. մարտին լույս ընծայեց քաղաքականության մեջ գործող կանանց նվիրված հատուկ համար,<sup>93</sup> որը բաժանվեց երկրի ողջ տարածքում: Սակայն, ընդհանուր առմամբ, կանանց՝ որպես թեկնածուների տեսանելիությունը ցածր էր, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի կողմից անցկացված լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ հանրային լրատվամիջոցների և հանրապետության ողջ տարածքում հեռարձակվող հեռուստատեսության՝ քաղաքականության հետ կապված լրատվական տեղեկությունների չորս տոկոսից փոքր մասն էր վերաբերել կին թեկնածուների:<sup>94</sup>

Մայիսի 12-ի ընտրություններից հետո ձևավորված Խորհրդարանում կա 12 կին պատգամավոր, որոնք բոլորն ընտրվել են համամասնական ընտրակարգով:<sup>95</sup> Հանրապետական կուսակցության կողմից ընտրված պատգամավորներից ընդամենը երկուսն էին կանայք. Հանրապետական կուսակցության ցուցակում ընդգրկված բոլոր մյուս կանայք, ովքեր կարող էին մանդատ ստանալ, հրաժարվեցին դրանից (և քանի որ Հանրապետական կուսակցության ցուցակից խորհրդարան մուտք գործող վերջին պատգամավորը 82-րդ համարն էր, ցուցակում նրանից ավելի առաջ գտնվող վեց կին փաստորեն հրաժարվել էր մանդատից): “Բարգավաճ Հայաստան”, ՀՀԴ և “Ժառանգություն” կուսակցություններն ունեն երեքական կին պատգամավոր, իսկ “Օրինաց երկիր”-ը՝ մեկը:

## XI. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԵՐ

Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններում դիտորդական առաքելություն անցկացրեցին 52 տեղական դիտորդական կազմակերպություններ: ԿԸՀ-ն հրաժարվեց հավատարմագրել 10 ՀԿ-ների՝ հիմնականում այն պատճառով, որ նրանք չէին համապատասխանում իրենց կանոնադրության մեջ համապատասխան դրույթ ունենալու մասին պահանջին, իսկ հավատարմագրված ՀԿ-ներից մեկի գրանցումն անվավեր ճանաչվեց այն հիմքով, որ ՀԿ-ն խախտել էր կուսակցական չլինելու մասին պահանջը: Տեղական դիտորդներ էին ներկա

<sup>93</sup> Տես [www.armenianow.com](http://www.armenianow.com): Խմբագիրը գրում է, որ հատուկ հրատարակության 25,000 օրինակ է բաժանվել:

<sup>94</sup> Հ1 (հանրային հեռուստատեսություն)՝ 3.2 տոկոս, Հ2՝ 2.8 տոկոս, “*Արմենիա*” հեռուստաալիք՝ 2.9 տոկոս, “*ԱԼՄ*” հեռուստաալիք՝ 0.7 տոկոս, Հանրային ռադիո՝ 3.6 տոկոս:

<sup>95</sup> 2003 թ. խորհրդարանական ընտրություններում մեծամասնական մանդատ էր ստացել մեկ կին: Գործող մեծամասնական ընտրակարգը կարծես նպաստավոր չէ խորհրդարանում կանանց ներկայացվածությունն ապահովելու համար:

քվեարկության ժամանակ ԸՄԴԱ-ի այցելած տեղամասային կենտրոնների 82 տոկոսում և քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ դիտարկված տեղամասային կենտրոնների 89 տոկոսում: ԸՄԴԱ-ում ներկայացված միջազգային կազմակերպություններից գատ, ԿԸՀ-ն հավատարմագրել էր Անկախ պետությունների համագործակցության Գործադիր կոմիտեի և Միջխորհրդարանական վեհաժողովի դիտորդներին:

Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխություններից մեկով պահանջվում է, որպեսզի միջազգային կազմակերպությունները հրավիրված լինեն կամ Հանրապետության Նախագահի, կամ Ազգային ժողովի, կամ Կառավարության, կամ ԿԸՀ-ի կողմից:

Ոչ Ընտրական օրենսգիրքը, ոչ դիտորդների վերաբերյալ ԿԸՀ-ի ընդունած իրավական ակտերը չեն պարունակում միջազգային և տեղական դիտորդների քաղաքացիության մասին պահանջների հստակ բացատրություն: Եղել են դեպքեր, երբ Հայաստանի քաղաքացիները գրանցվել են որպես միջազգային դիտորդներ, իսկ այլ պետությունների քաղաքացիները՝ որպես տեղական դիտորդներ:

ԵԱՀԿ-ի 1990 թ. կոպենհագենյան փաստաթղթի 8-րդ հոդվածին (որով նախատեսվում է ԵԱՀԿ-ի մասնակից ցանկացած այլ պետությունից ընտրությունների դիտորդներ հրավիրելու հնարավորությունը) հակասում էր այն, որ Հայաստանի իշխանությունները վերջին պահին հրաժարվեցին մուտքի արտոնագրեր տրամադրել ԵԱՀԿ-ի մասնակից պետություններից մեկի՝ Թուրքիայի կողմից տրամադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին:

## **XII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ**

### **Ա. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

Քվեարկության օրը քվեարկությունը տեղի ունեցավ մեծ մասամբ հանդարտ միջավայրում: Քվեարկության անցկացումը գնահատվեց որպես շատ լավ կամ լավ այցելված տեղամասային կենտրոնների 94 տոկոսում: Պրոբլեմատիկ գնահատված դեպքերի մի զգալի մասում այդպիսի գնահատականի պատճառը մարդկանց մեծ կուտակումներն էին (14 տոկոս) և քվեարկության գաղտնիության պայմանի կատարումը՝ ընտրական տեղամասերում նկատված այնպիսի քվեախցիկներով, որոնց դիմային մասը բաց էր (17 տոկոս): Տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք չունեցող անձինք էին ներկա եղել տեղամասային կենտրոնների 16 տոկոսում: Մարդկանց մեծ կուտակումները, որոնք հիմնականում հետևանք էին տեղամասային կենտրոնների համար ընտրված առկա տարածքների սահմանափակ հնարավորությունների և երկրի որոշ շրջաններում վատ եղանակային պայմանների, հանգեցրեցին նրան, որ քվեարկողները պատրաստ չէին դրսում սպասել, և թիվ 30 ԸՀ-ի (Վանաձոր) ՏԸՀ-ներից մեկում պատճառ



դարձան տեղամասային կենտրոնի՝ սահմանված ժամից 30 րոպե ավելի շուտ փակման, որի հետևանքով այնտեղ սպասող մարդիկ զրկվեցին քվեարկելու հնարավորությունից:

Ակնհայտորեն դիտավորյալ բնույթի պրոբլեմներ նկատվեցին Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Վայոց Ձորի մարզերի որոշ մասերում կենտրոնացած ՏԸՀ-ներում, որի հետևանքով այդ մասերում ավելի բարձր տոկոս կազմեցին ԸՄԴԱ-ի դիտորդների բացասական գնահատականները: Մեկից ավելի անգամ քվեարկող մարդիկ նկատվեցին թիվ 23 ԸԸՀ-ի (Սևան) և թիվ 31 ԸԸՀ-ի (Վանաձոր-Ալավերդի) որոշ տեղամասային կենտրոններում:<sup>96</sup> Նկատվեց նաև ՏԸՀ-ներից մեկի կողմից փորձ՝ քողարկելու որոշակի գործունեություն թիվ 39 ԸԸՀ-ի (Վայոց Ձոր) տեղամասային կենտրոններից մեկում:<sup>97</sup> Թիվ 31 ԸԸՀ-ում գտնվող տեղամասային կենտրոններից մեկի դրսի մասում ԸՄԴԱ-ի դիտորդները տեսան մարդկանց, ում անձնագրերի մեջ, ըստ երևույթին, անձնական տվյալների կեղծ էջ էր ավելցվում, ներառյալ լուսանկարը, որը քվեարկողի փոխարեն այլ անձի ներկայանալու միջոցով կեղծիք իրականացնելու նախապատրաստության էր նման:<sup>98</sup> Միևնույն ընտրատարածքում գտնվող մեկ այլ տեղամասային կենտրոնի դիմաց գտնվող մեկ այլ տարածքում, ըստ երևույթին, տեղի էր ունենում ընտրակաշառքների բաժանում:<sup>99</sup> Երեք այլ դեպքերում ԸՄԴԱ-ի դիտորդները նկատեցին, որ իրենց ժամանումը տեղամասային կենտրոն հանգեցրեց նրան, որ տարածքի ներսում կամ անմիջապես տարածքի հարևանությամբ հավաքված մարդկանց խմբերը հանկարծակի ցրվեցին:<sup>100</sup>

Կուսակցությունների կամ թեկնածուների վստահված անձանց կամ առանց որևէ լիազորությունների հանդես եկող անձանց վարքի հետ կապված լարվածության դրվագներից էր հուզումը թիվ 29 ԸԸՀ-ի (Սպիտակ) տեղամասային կենտրոններից մեկում, երբ “Բարգավաճ Հայաստան” կուսակցության ներկայացուցիչները սպառնացին ՏԸՀ-ին և գողացան թանաքամանը, որն օգտագործվում էր ՏԸՀ-ի կնիքը դնելու համար, որի հետևանքով ժամանակավորապես կասեցվեց քվեարկության ընթացքը:<sup>101</sup>

#### Բ. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

ԸՄԴԱ-ն քվեաթերթիկների հաշվարկը և արդյունքների մասին արձանագրությունների լրացումը դիտարկեց 108 ՏԸՀ-ներում: Քվեաթերթիկների հաշվարկը ձգձգվեց, չնայած որ դիտարկված դեպքերից միայն չորսում էր, որ հաշվարկը տևեց ավարտի համար օրենքով սահմանված ժամկետից ավելի

<sup>96</sup> ՏԸՀ-ներ 23/51, 23/70, 31/11:

<sup>97</sup> ՏԸՀ 39/10:

<sup>98</sup> ՏԸՀ 31/61:

<sup>99</sup> ՏԸՀ 31/04: ԸՄԴԱ-ի դիտորդների ժամանումը, ըստ երևույթին, պատճառ դարձավ, որպեսզի կասեցվի ընտրակաշառքների բաժանումը:

<sup>100</sup> ՏԸՀ-ներ 25/17, 25/25, 37/66:

<sup>101</sup> ՏԸՀ 29/29:

երկար:<sup>102</sup> Այնտեղ, որտեղ ԸՄԴԱ-ն դիտել է քվեաթերթիկների հաշվարկը, հաշվարկը մեծ մասամբ անցկացվել է ըստ սահմանված ընթացակարգի, սակայն տեղամասերի մոտ վեց տոկոսում ՏՀՀ-ների նախագահները բարձրաձայն չեն հայտարարել կամ ներկա գտնվողներին ցույց չեն տվել քվեաթերթիկի վրա ընտրողի կատարած ընտրությունը, իսկ տեղամասերի ինը տոկոսում բարձրաձայն չի հայտարարվել ընտրությունների մասնակիցների օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը:

Քվեարկության ընթացակարգով պահանջվում է, որպեսզի ընտրողը քվեաթերթիկի վրա իր ընտրությունն արտահայտելու համար օգտագործի “V” նշան: Այս պահանջի կամայական կիրառության պրոբլեմներ ծագեցին. որոշ ՏՀՀ-ներ անվավեր էին ճանաչում քվեաթերթիկներ, որոնցում “V” նշանը մի փոքր դուրս էր վանդակից կամ անփութորեն էր գրված, նույնիսկ եթե քվեարկողի մտադրությունը հստակ էր:

Քվեաթերթիկների հաշվարկի առումով դիտարկված տեղամասերի 35 տոկոսում ՏՀՀ-ների անդամները դժվարություններ ունեցան արդյունքների արձանագրությունները լրացնելիս, և 11 դեպքերում նկատվեց, թե ինչպես են ՏՀՀ-ներն արգելված գործողություն կատարում՝ փոխելով արձանագրության “Ելակետային տվյալները”:<sup>103</sup> Դա վկայում էր այն մասին, որ ՏՀՀ-ների վերապատրաստումները չէին ապահովել նախատեսված բարձր չափով տեղեկացվածություն ընթացակարգերի մասին, որոնք այս ընտրությունների դեպքում նոր էին: ՏՀՀ-ներում արդյունքների արձանագրությունների լրացման կապակցությամբ դիտարկված դժվարությունների հետևանքներն առավել ակնհայտ դարձան արդյունքներն ԸՀՀ-ներում աղյուսակավորման նպատակով այնտեղ փոխադրելիս, երբ պարզվեց, որ արդյունքների արձանագրություններից շատերը ոչ լիարժեքորեն կամ ոչ ճիշտ էին լրացվել ՏՀՀ-ների կողմից:<sup>104</sup>

Որոշ տեղամասերում ուղղակիորեն նկատվեցին ՏՀՀ-ների կողմից իրականացվող հաշվարկի և արդյունքների արձանագրությունների դիտավորյալ փոփոխության փորձեր՝ քվեաթերթիկները մի դարսակից մյուսը տեղափոխելու, դարսակին անվավեր քվեաթերթիկներ ավելացնելու տեսքով, կամ արձանագրությունը կազմելիս:<sup>105</sup> Թիվ 7 ԸՀՀ-ի (Մալաթիա-Մեքաստիա, Երևան) ՏՀՀ-ներից մեկում մեծամասնական միակ թեկնածուի վստահված անձին թույլ տրվեց մասնակցել

<sup>102</sup> Քվեարկության ավարտից տաս ժամ հետո:

<sup>103</sup> Ընտրական օրենսգրքի 63.1 հոդված. “Ելակետային տվյալները” ներառել են ընտրողների ընդհանուր թիվը՝ ըստ ընտրողների ցուցակների, ստացված քվեաթերթիկների և ծրարների թիվը, անվավեր ճանաչված և չօգտագործված քվեաթերթիկների թիվը և քվեաթերթիկների ելունդների թիվը:

<sup>104</sup> Տես XIII.Ա բաժին՝ “Արդյունքների աղյուսակավորումը”:

<sup>105</sup> Քվեաթերթիկները դիտավորյալ սխալ դարսակի վրա դնելու կամ կոնկրետ դարսակի մեջ անվավեր քվեաթերթիկներ ավելացնելու դեպքեր դիտարկվեցին թիվ 11/09, 17/38, 29/29 և 29/42 ՏՀՀ-ներում: Դիտարկման ընթացքում հաշվարկված քվեարկողների թվից տարբերվող քվեարկողների թիվ արձանագրության մեջ լրացնելու դեպքեր դիտարկվեցին թիվ 10/10 և 16/43 ՏՀՀ-ներում:

համամասնական ընտրակարգի քվեաթերթիկների հաշվարկին: Բացի այդ, նա իր ձեռքի տակ էր պահում առաջատար կուսակցություններից մեկի օգտին քվեարկված քվեաթերթիկների դարասկը, և հաշվարկի վերջում պնդեց, որպեսզի տվյալ կուսակցության օգտին քվեարկված քվեաթերթիկների ինչ-որ թիվ արձանագրվի արձանագրության մեջ՝ առանց տվյալ դարասկում գտնվող քվեաթերթիկները հաշվարկելու: Այս վստահված անձին թույլ տվեցին լիովին կառավարել մեծամասնական ընտրակարգի քվեաթերթիկների հաշվարկը. նկատվեց, թե ինչպես է նա տվյալ թեկնածուին դեմ քվեարկված մեծաթիվ քվեաթերթիկներ դնում «կողմ» քվեարկված քվեաթերթիկների դարասկում:<sup>106</sup> Թիվ 21 ԸԸՀ-ի (Արմավիր) ՏԸՀ-ներից մեկում ՏԸՀ-ի նախագահն ԸՄԴԱ-ի դիտորդներին ասաց, որ ինքը ճշգրտելու է իր կողմից սատարվող կուսակցության օգտին արձանագրված արդյունքները, որից հետո նկատվեց, թե նա ինչպես է համապատասխանաբար 25 ձայնով ավելի մեծ ցուցանիշ արձանագրում:<sup>107</sup>

Քվեաթերթիկների հաշվարկը պահանջվում է անցկացնել հսկվող պայմաններում, որին կարող են ներկա գտնվել միայն լիազորված անձինք, ընդ որում՝ առանց ընդհատումների: Հաճախակի էին շեղումներն այդ պահանջից՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դիտարկվել էր հեռախոսների, հատկապես՝ բջջային հեռախոսների լայնատարած օգտագործում հաշվարկին ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ նաև ՏԸՀ-ի անդամների կողմից, որոնք, ակնհայտորեն, հայտնում էին հաշվարկի ընթացիկ մանրամասները:

### XIII. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

#### Ա. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

ԸՄԴԱ-ն 41 դիտարկել է տեղամասային կենտրոններում քվեաթերթիկների հաշվարկից ստացված արդյունքների աղյուսակավորումը 41 ԸԸՀ-ներից 39-ում: Ընդհանուր առմամբ, ԸՄԴԱ-ի դիտորդները աղյուսակավորման անցկացումը գնահատել են որպես վատ կամ շատ վատ ԸԸՀ-ների 34 տոկոսում: ԸՄԴԱ-ի դիտորդներն արձանագրել են շեղումներ սահմանված ընթացակարգից ԸԸՀ-ների 31 տոկոսում: Այդ շեղումները ներառել են ընտրական նյութերի անվտանգության և թափանցիկության հետ կապված մի շարք ընթացակարգերի չպահպանումը:<sup>108</sup>

Արձանագրությունների լրացում կամ ճշգրտում է նկատվել ԸԸՀ-ների զգալի մասում. ԸԸՀ-ների 83 տոկոսը կարգադրել են ճշգրտումներ կատարել, մինչդեռ ՏԸՀ

<sup>106</sup> ՏԸՀ 07/04: Նաև դիտարկվեց, թե ինչպես է նշված վստահված անձն անվավեր ճանաչված քվեաթերթիկներ դնում իր ձեռքի տակ եղած դարասկի վրա:

<sup>107</sup> ՏԸՀ 21/40:

<sup>108</sup> ՏԸՀ-ի կնիքի ստուգումը ԸԸՀ-ի կողմից կանոնավոր կերպով չիրականացվեց դիտարկված ԸԸՀ-ների 12 տոկոսում: Արձանագրությունների դիմաց ստացականներ չտրամադրվեցին ՏԸՀ-ներին դեպքերի 13 տոկոսում, իսկ ՏԸՀ արձանագրության հավաստագրումն ԸԸՀ-ի կողմից բաց թողնվեց դեպքերի 18 տոկոսում:

նոր արձանագրությունների կազմում է դիտարկվել թիվ 13 ԸԸՀ-ում (Էրեբունի-Նուբարաշեն, Երևան), թիվ 16 ԸԸՀ-ում (Մասիս) և թիվ 37 ԸԸՀ-ում (Գորիս): Նկատվել է, թե ինչպես են 14 ԸԸՀ-ներ փոփոխում կամ կարգադրում փոփոխություններ կատարել ՏԸՀ արձանագրությունների ելակետային տվյալների մեջ՝ գործողություն, որն Ընտրական օրենսգրքի համաձայն արգելված է:

Յոթ ԸԸՀ-ներում նկատվել է, որ ՏԸՀ-ներից քվեաթերթիկներն առաքվել են տուպրակներով, առանց կնքման, կամ պարզ է դարձել, որ դրանք կնքված և վերաբացված են եղել:<sup>109</sup> Թիվ 19 ԸԸՀ-ում (Վաղարշապատ) ԸՄԴԱ-ի դիտորդներն ակնատես եղան, թե քվեաթերթիկների չկնքված տուպրակներ ինչպես են իջեցվում ներքևի հարկ՝ Հանրապետական կուսակցության նախընտրական շտաբ, ապա՝ արդեն կնքված վիճակում կրկին վերև բարձրացվում ԸԸՀ-ի գրասենյակ: Թիվ 4 ԸԸՀ-ն (Արաբկիր, Երևան), թիվ 36 ԸԸՀ-ն (Արթիկ-Մարալիկ) և թիվ 40 ԸԸՀ-ն (Նոյեմբերյան) անկարող եղան արդյունքների աղյուսակավորումն ավարտել նախքան սահմանված ժամը, որն էր մայիսի 13-ի ժ. 14:00-ն:

ԿԸՀ-ն զգալի ջանքեր էր գործադրել՝ ստեղծելու ՏԸՀ արդյունքներն իր ուսուկայքում հրապարակելու թափանցիկ համակարգ, և մեծ մասամբ ԿԸՀ-ն կարողացավ լուծել այս խնդիրն օրենքով սահմանված ժամկետներում: ԿԸՀ-ն համամասնական ընտրակարգի նախնական արդյունքները հրապարակեց մայիսի 13-ին ժ. 16:10-ին: ԿԸՀ-ի անդամներից երեքը, որոնք ներկայացնում էին նախկին “Արդարություն” դաշինքը և “Օրինաց երկիր” և Ազգային միաբանություն” կուսակցությունները, հրաժարվեցին ստորագրել արդյունքների արձանագրությունը՝ նշելով, թե իրենց հայտնի դարձած ընտրախախտումների մասշտաբները հարցականի տակ էին դնում ընտրությունների արդյունքի ճիշտ լինելը:<sup>110</sup>

Մայիսի 16-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի դիտորդները Երևանում՝ ԿԸՀ-ի գրասենյակում, ակնատես եղան, թե ԿԸՀ-ի աշխատակիցներն ինչպես են ԸԸՀ-ի ներկայացուցիչների առջև կրկին աղյուսակավորման համակարգչային տվյալների համակարգի մեջ մուտքագրում համամասնական ընտրակարգի վերաբերյալ ՏԸՀ արձանագրության տվյալները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին բացատրվեց, որ ԸԸՀ-ների կողմից Երևան բերված արձանագրությունների բնօրինակներն օգտագործվում էին տվյալները կրկին մուտքագրելու նպատակով, և որ ընտրությունների վերջնական արդյունքները կորոշվեն դրա հիման վրա:

Մայիսի 19-ին ԿԸՀ-ն անցկացրեց նիստ համամասնական ընտրակարգի վերջնական արդյունքները հաստատելու և հայտարարելու, ինչպես նաև մեծամասնական ընտրակարգի արդյունքները հաստատելու նպատակով:

<sup>109</sup> ԸԸՀ-ներ թիվ 13, 19, 24, 26, 31, 33 և 36:

<sup>110</sup> Նախնական արդյունքների համաձայն, և Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (նախկին “Արդարություն” դաշինքի կազմի մեջ հիմնական գործընկերը), և “Ազգային միաբանություն” կուսակցությունը չհաղթահարեցին խորհրդարան մտնելու համար սահմանված 5 տոկոսի շեմը, և չնայած որ “Օրինաց երկիր” կուսակցությունը հաղթահարեց նշված շեմը, վերջինիս արդյունքը շատ ավելի ցածր էր, քան 2003-ին:

Վերջնական արդյունքներն ընդամենը չնչին չափով էին տարբերվում սկզբնական արդյունքներից: Վերջնական արդյունքների արձանագրությունը ստորագրելուց նույնպես հրաժարվեցին ԿԸՀ-ի այն երեք անդամները, ովքեր հրաժարվել էին ստորագրել նախնական արդյունքների արձանագրությունը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն ի վիճակի եղավ ԸՄԴԱ դիտորդների կողմից 35 ընտրատարածքներից ստացված ՏԸՀ արձանագրությունների 94 հավաստված քաղվածքները համեմատել համամասնական ընտրակարգի՝ ԿԸՀ-ի ուսուկայքում ըստ տեղամասերի փակցված նախնական արդյունքների հետ: Մուտքագրված տվյալների մեջ 187 առանձին կետերով հայտնաբերվեցին տարբերություններ: Տարբերությունները ներառում էին տողերի միջև թվերի փոխտեղումներ և սխալ հաշվարկներ: Առավել էական անհամապատասխանություններ հայտնաբերվեցին ելակետային տվյալների մեջ, որոնք, Ընտրական օրենսգրքի համաձայն, սկզբնապես արձանագրվելուց հետո չպետք է փոփոխության ենթարկված լինեին:

Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ թեկնածուները, վստահված անձինք և ՏԸՀ-ի անդամներն իրավունք ունեն բողոքարկել կոնկրետ տեղամասում քվեարկության արդյունքների դեմ՝ վերահաշվարկի պահանջ ներկայացնելով համապատասխան ԸԸՀ-ին: Այն դեպքերում, որոնցում ԸԸՀ-ները մերժեցին վերահաշվարկի պահանջները, այդ որոշումները կայացվեցին ընթացակարգային հիմքերով և օրենքին համապատասխան:<sup>111</sup>

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին հայտնի դարձան վերահաշվարկի ավելի քան 30 պահանջներ, որոնք վերաբերում էին 12 ընտրատարածքներում գտնվող ավելի քան 200 տեղամասերի. դրանք հիմնականում կապված էին մեծամասնական ընտրակարգի հետ: Նշված պահանջների մի մասը բողոքաբերների կողմից ավելի ուշ ետ վերցվեցին: Երկու դեպքերում՝ թիվ 15 ԸԸՀ-ում (Թալին) և թիվ 25 ԸԸՀ-ում (Հրազդան) բողոքաբերները ետ վերցրեցին իրենց վերահաշվարկի պահանջները վերահաշվարկի սկսվելուց հետո՝ հայտարարելով, թե չեն վստահում ԸԸՀ-ի կողմից իրականացվող վերահաշվարկի գործընթացին: Թիվ 15 ԸԸՀ-ում վերահաշվարկի վրա ազդեց մայիսի 16-ին և 17-ին գրասենյակի դիմաց անցկացվող ցույցը և ԸԸՀ-ի քվորում ապահովելու պատճառով տեղի ունեցած ձգձգումը:

Այն հինգ վայրերում, որոնցում վերահաշվարկն անցկացվեց մինչև վերջ, հայտնի դարձավ, որ վերահաշվարկն իրականացվել է հանդարտ միջավայրում և սահմանված ընթացակարգի պահպանմամբ: Թիվ 33 ԸԸՀ-ն (Աշոցք-Գյումրի) չպահպանեց վերահաշվարկների ամփոփման համար սահմանված ժամկետը, սակայն, ըստ հայտնի դարձած տեղեկությունների, ԿԸՀ-ն այդ ԸԸՀ-ի համար երկարաձգեց սահմանված ժամկետը:<sup>112</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի դիտարկված

<sup>111</sup> Ընտրական օրենսգրքի 40<sup>2</sup> հոդված:

<sup>112</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի Հետընտրական 1-ին միջանկյալ զեկույցին ուղղված իր պատասխանում ԿԸՀ-ի Նախագահը նշել էր, որ այդպես չի եղել, սակայն հունիսի 5-ին նա Սահմանադրական դատարանին տեղեկացրեց, որ վերահաշվարկի ընթացքում իսկապես

վերահաշվարկների արդյունքում ստացված արդյունքներն էապես տարբեր չեղան սկզբնական արձանագրություններում գրանցված արդյունքներից:

Գլխավոր դատախազը կարգադրեց արդյունքների վերահաշվարկ անցկացնել թիվ 31 ԸԸՀ-ի (Վանաձոր-Ալավերդի) 30 ՏԸՀ-ներում՝ ընտրախախտումների վերաբերյալ ընտրություններում պարսվող թեկնածու Լարիսա Փարեմուզյանի ներկայացրած բողոքի հիման վրա: Այդ վերահաշվարկի արդյունքում որևէ էական անճշտություն չարձանագրվեց:

Չնայած որ օրենքով պահանջվում է հրապարակային վայրում փակցնել համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների վերաբերյալ ԸԸՀ-ների արձանագրությունները՝ ըստ առանձին ՏԸՀ-ների, մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքների՝ ըստ առանձին ՏԸՀ-ների փակցնելու պահանջ Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում: Հետևաբար, վստահված անձինք, դիտորդները և այլ շահագրգիռ կողմերը որևէ հնարավորություն չունեցան՝ ստուգելու ՏԸՀ-ների արձանագրությունների հավաստված կրկնօրինակների ճշտությունը՝ դրանք համեմատելով մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԸԸՀ-ի արձանագրության հետ: Ավելին, համամասնական և մեծամասնական ընտրակարգերի արդյունքների արձանագրությունների՝ ՏԸՀ-ում և ԸԸՀ-ում տեսանելի վայրում փակցված մնալու ժամկետները նախատեսված չեն: Շատ վայրերում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն նկատեց, որ արձանագրությունները քվեարկության օրվանից հետո կարճ ժամանակ անց հանվել էին պատերից: Մայիսի 18-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն նկատեց, որ մեծամասնական ընտրակարգի արդյունքների վերաբերյալ բոլոր ԸԸՀ-ների արձանագրությունների տվյալները հանվել են ԿԸՀ-ի ոստկայքից:

#### Բ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն տեղեկացվեց ԿԸՀ-ին ներկայացված յոթ բողոքների և դրանից մոտ երկու անգամ ավելի շատ թվով ԸԸՀ-ների ներկայացված բողոքների մասին, որոնք վերաբերում էին քվեարկության օրվա ընթացքում տեղի ունեցած անկանոնությունների, ներառյալ ընտրակաշառքների, քվեաթերթիկների լցումման, ոչ իրավասու անձանց ներկա գտնվելուն և քարոզչությանը: ԿԸՀ-ն իսկապես ջանք չինսպեց՝ ժամանակին լուծելու վեճերը: ԿԸՀ-ի ստացած բողոքների մեծ մասը մերժվեց ԿԸՀ-ի իրավասության շրջանակից դուրս գտնվելու կամ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Չնայած որ ԸԸՀ-ները նույնպես բողոքները քննեցին թափանցիկ կերպով, որոշ հարցեր մտահոգության տեղիք տվեցին: Մասնավորապես, քվեարկության օրը թիվ 17 ԸԸՀ-ն (Արտաշատ) հրաժարվեց քննել թեկնածուներից մեկի ներկայացրած չորս բողոքները: Բողոքները սխալմամբ հասցեագրվել էին առանձին ՏԸՀ-ներին, այլ ոչ՝ ԸԸՀ-ին: Բողոքները մերժելու

փոխարեն ԸԸՀ-ն կարող էր բողոքաբերներին հուշել ձևական սխալն ուղղելու հնարավորության մասին:<sup>113</sup>

Ընտրությունների արդյունքները կարող են վիճարկվել միայն Սահմանադրական դատարանում: Մայիսի 26-ին “Օրինաց երկիր”, “Նոր ժամանակներ” և “Հանրապետություն” կուսակցությունները և “Իմպիչմենթ” դաշինքն առանձին դիմումներ ներկայացրեցին ընդդեմ համամասնական ընտրակարգի արդյունքների՝ պահանջելով անվավեր ճանաչել դրանք:<sup>114</sup> Սահմանադրական դատարանը որոշեց դրանք միասին քննել: Դատարանի նիստերը տեղի ունեցան հունիսի 1-ից մինչև 9-ը: Դիմումատուները բողոքում էին ընտրական գործընթացին պետության միջամտության, ԿԸՀ-ի անգործության, քարոզչության պաշտոնական ժամկետի մեկնարկից առաջ քարոզչության, քարոզչության ֆինանսավորման կանոնների խախտումների, ընտրությունների ժամանակ լրատվամիջոցների գործելակերպը կարգավորող իրավական ակտերի խախտումների, ընտրողներին կաշառելու, երկրի տարածքից դուրս քվեարկելու հնարավորություն տվող օրենքի դրույթն ուժը կորցրած ճանաչելու և արդյունքները կեղծելու մասին: “Օրինաց երկիր” կուսակցության բողոքում առանձնակի ուշադրություն էր դարձվում որոշ ԸԸՀ-ներում և ՏՀՀ-ներում ենթադրյալ խախտումների վրա:

ԿԸՀ-ն ընդունեց, որ արդյունքների արձանագրություններում կատարվել են փոփոխություններ, սակայն պնդեց, որ դրանք միայն տեխնիկական ուղղումներ են եղել: ԿԸՀ-ն առարկեց բոլոր մյուս բողոքներին, չնայած որ ԿԸՀ-ի դիրքերը թույլ էին թվում քարոզչության ֆինանսավորման և լրատվամիջոցներով քարոզչության անցկացման առումներով, որի մասին ուղղակիորեն նշեց Դատարանն իր նիստերի ընթացքում:

Սահմանադրական դատարանը հունիսի 10-ին վճռեց անփոփոխ թողնել ԿԸՀ-ի որոշումն ընտրությունների վերջնական արդյունքների մասին:<sup>115</sup> Վճռում,

<sup>113</sup> Ընտրական օրենսգրքի Art. 40<sup>1.3</sup> հոդված:

<sup>114</sup> Դատական պաշտոնյաները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴՄ-ին հայտնեցին, որ առաջնորդվելով “Սահմանադրական դատարանի մասին” օրենքով, դատարանը համամասնական և մեծամասնական ընտրակարգերի վերաբերյալ բողոքներ ընդունելու է վերջնական արդյունքների հայտարարումից հետո յոթերորդ օրը, այսինքն, համամասնական ընտրակարգի վերաբերյալ՝ մայիսի 26-ին, իսկ մեծամասնական ընտրակարգի վերաբերյալ՝ ամենաուշը մայիսի 24-ին: (Հնարավոր է, որ Ընտրական օրենսգրքի և “Սահմանադրական դատարանի մասին” օրենքի դրույթների միջև առկա լինեն տարբերություններ, որի դեպքում, համաձայն Սահմանադրական դատարանի պաշտոնյաների, գերակայում է “Սահմանադրական դատարանի մասին” օրենքը): Սահմանադրական դատարանն արդյունքների հայտարարումից հետո տասնհինգ օրվա ընթացքում պետք է վերջնական որոշում կայացնեի համամասնական ընտրակարգի արդյունքների վերաբերյալ, մինչդեռ մեծամասնական ընտրակարգին առնչվող վեճեր լուծելու համար Սահմանադրական դատարանին տրվել էր մեկ ամիս ժամանակ: Ավելին, Սահմանադրական դատարանը կարող էր որոշում կայացնել մեծամասնական ընտրակարգի վերաբերյալ որոշում կայացնելու վերջնամակետը հետաձգել մինչև 50 օրով: Սահմանադրական դատարանի որոշում թիվ CDD-703, 10 հունիս, 2007 թ.:

<sup>115</sup>

այնուամենայնիվ, նշվեցին Հայաստանում ընտրությունների կարգավորման մի շարք թերություններ, մասնավորապես, քարոզչության, ինչպես նաև քարոզչության և կուսակցությունների ֆինանսավորման առնչությամբ: Դատարանը նաև նշեց Ընտրական օրենսգրքի և այլ օրենքների, օրինակ՝ «Հեռարձակման մասին» օրենքի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի միջև առկա հակասող դրույթները: Դատարանն ընդգծեց Կառավարության գործունեությունը քարոզչությունից սահմանազատելու կարևորությունը: Դատարանը նաև կարգադրեց Գլխավոր դատախազությանն ուսումնասիրել վեց ՏՀՀ-ներից<sup>116</sup> ստացված նյութերը և, անհրաժեշտության դեպքում, հարուցել քրեական հետապնդում:

Սահմանադրական դատարանը նաև ստացել էր երեք բողոք մեծամասնական ընտրակարգի վերաբերյալ՝ կապված թիվ 11, 33 և 36 ԸՀՀ-ների արդյունքների հետ, որոնք ներկայացրել էին համապատասխանաբար պարտված թեկնածուներ Հեղինե Բիշարյանը («Օրինաց երկիր»), Հովհաննես Հայկի Մարգարյանը («Օրինաց երկիր») և Մուշեղ Ագունի Սաղաթեյանը (անկուսակցական): «Օրինաց երկիր» կուսակցության նշված երկու թեկնածուները ետ վերցրեցին իրենց բողոքները հունիսի 12-ին՝ հայտարարելով, թե դրա պատճառն անվստահությունն է դատական համակարգի նկատմամբ: Դատարանը քննեց երրորդ բողոքը հունիսի 25-ին և 29-ին: Դիմումատուն պնդեց, որ ընտրությունների ժամանակ տեղի են ունեցել մեծաթիվ խախտումներ, որոնց ընդհանուր թիվն իր ընտրատարածքում հասել է 1,441 անձընտրությունների: 26 տեղամասերի նյութերն ուսումնասիրելուց հետո դատարանը հունիսի 29-ին մերժեց նրա բողոքը:

#### Գ. ԱՅԼ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

Ընտրախախտումների համար քրեական պատասխանատվության հետամուտ լինելու մասին Նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Վարչապետ Սերժ Սարգսյանի արած հայտարարություններին համահունչ, ավարտին հասցվեց երեք քրեական գործերի քննությունը: Թեկնածուի օգտին կաշառքներ բաժանելու մեղադրանքով մայիսի 31-ին Արմավիրի առաջին ատյանի դատարանն անձին դատապարտեց 2.5 տարվա ազատազրկման, որը փոխարինվեց մեկ տարի փորձաշրջանով: Թիվ 15/16 ՏՀՀ-ի (գյուղ Գետաշեն, Արմավիրի մարզ) բոլոր ինը անդամների գործը դատարանի կողմից քննվեց հունիսի 5-ին՝ ընտրությունների արդյունքները կեղծելու մեղադրանքով. ՏՀՀ-ի նախագահը դատապարտվեց 18 ամիս ազատազրկման, իսկ մյուս անդամները պայմանականորեն ազատվեցին նշանակված պատիժների կրումից. ՏՀՀ-ի քարտուղարի մասով՝ չորս տարի, իսկ մյուս անդամների մասով՝ երեքական տարի, մինչդեռ քարտուղարի և մյուս անդամների նկատմամբ սահմանվեց համապատասխանաբար մեկ տարով և երկուական տարով փորձաշրջան: Հունիսի 6-ին թեկնածուներից մեկի վստահված անձը թիվ 25 ԸՀՀ-ում (Հրազդան) դատապարտվեց այն բանի համար, որ մեկ այլ անձի դրդել էր կաշառել ընտրողների: Դատարանը վստահված անձին

<sup>116</sup> ՏՀՀ-ներ թիվ 18/43, 20/36, 20/47, 23/39, 23/41, 41/14:



դատապարտեց մեկ տարվա ազատազրկման, իսկ նրա հանցակցին՝ մեկ տարվա ազատազրկման՝ նրան պայմանականորեն ազատելով պատժի կրումից:

#### XIV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանյան իշխանությունների քննարկմանն են ներկայացվում հետևյալ առաջարկությունները, որոնք կարող են նպաստել նրանց հայտարարած նպատակների իրագործմանը և ընտրությունները ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած հանձնառություններին և ժողովրդավարական ընտրությունների այլ չափանիշներին համապատասխան անցկացնելու ուղղությամբ գործադրվող ջանքերին:

##### Ա. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

1. Ընտրական օրենսգիրքը պետք է համապատասխանեցնել այլ օրենսդրական ակտերի հետ, որպեսզի վերացվեն անհամապատասխանությունները, ներառյալ Սահմանադրական դատարանի կողմից նշվածները:
2. Հայաստանյան իշխանությունները պետք է քննարկեն քարոզչության և քարոզչության ֆինանսավորման վերաբերյալ դրույթների ամբողջական վերանայում անցկացնելու նպատակահարմարությունը՝ պաշտոնական քարոզչության շրջանից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո ե քաղաքացիական և քաղաքական հիմնարար իրավունքների լիարժեք հարգում ապահովելու համատեքստում, նպատակ հետապնդելով ընտրությունների մասնակիցներին ապահովել հավասար հնարավորություններ, ինչպես նաև քարոզչության համար կատարվող ծախսերի յուրաժամ և լիարժեք թափանցիկություն և այդ ծախսերի մասով հաշվետվողականություն: Քարոզչության վերաբերյալ առկա դրույթները պետք է հստակեցվեն, ներառյալ սահմանված ժամկետի մեկնարկից ավելի վաղ քարոզչության և անուղղակի քարոզչության վերաբերյալ դրույթները:
3. Հարկ է հստակեցնել “պետական տարածք” հասկացությունը՝ այն տարածքների մասով, որոնք ենթակա են անվճար օգտագործման քարոզչության ժամանակահատվածում:
4. Հարկ է քննարկել ընտրակաշառքը քրեականացնելու նպատակահարմարությունը՝ այս հանցատեսակը ներառելով նաև Քրեական օրենսգրքում, նպատակ հետապնդելով խստացնել կիրարկումը:
5. Բողոքները և բողոքարկման ընթացակարգերը կարգավորող՝ Ընտրական օրենսգրքի դրույթները հարկ է փոփոխել՝ ապահովելու ներկայացված ցանկացած գրավոր բողոքի վերաբերյալ յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովի կողմից գրավոր որոշման կայացումը լիազուամար նիսստում:

6. ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները պետք է օրենքով պարտավորեցվեն բոլոր էական ընտրախախտումները, ներառյալ այն ընտրախախտումները, որոնք կարող են ազդել արդյունքների վրա, փոխանցել դատախազներին և այլ համապատասխան մարմիններին:
7. Ընտրական օրենսգիրքը հարկ է փոփոխել՝ նախատեսելու ընտրությունների հետ կապված վեճի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումը բողոքարկելու հնարավորությունը:

Բ. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Դիտարկված այն գործելակերպը, որի շրջանակներում իշխող կուսակցությունների և Նախագահի նշանակած անձինք արտոնյալ էին ընտրական հանձնաժողովների ղեկավար “եռյակների” (նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար) կազմում ընդգրկվելու առումով, պետք է հրատապ կարգով վերանայել՝ նպատակ հետապնդելով ընդգծել “եռյակների” ներառիչ լինելու կարևորությունը, ինչպես նաև բարձրացնել հանրության վստահությունն ընտրական հանձնաժողովների՝ քաղաքական հնարավոր միջամտությունից անկախ լինելու նկատմամբ:
9. ԸԸՀ-ների տարածքների առանձնացումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շինություններից ցանկալի կլիներ՝ բարձրացնելու հանրության վստահությունն ընտրական հանձնաժողովների՝ քաղաքական հնարավոր միջամտությունից անկախ լինելու նկատմամբ:
10. Յուրաքանչյուր դեպքում, երբ որևէ ընտրատարածքում գրանցված ընտրողների թիվը մեկ ընտրատարածքի ընտրողների միջին թվից շեղվում է ավելի քան 10 տոկոսով, ԿԸՀ-ն պետք է պաշտոնապես գրավոր հստակեցնի համապատասխան “բացառիկ հանգամանքները” և պետք է ամեն ջանք գործադրի՝ խուսափելու նման շեղումներից:
11. Մարդկանց հնարավոր մեծ կուտակումներից խուսափելու համար հարկ է քննարկել մեկ տեղամասում գրանցված ընտրողների առավելագույն թիվն էլ ավելի կրճատելու նպատակահարմարությունը:
12. ԿԸՀ-ի գործունեության թափանցիկությունը կարող է բարձրացվել, եթե ԿԸՀ-ի նիստերի ժամանակացույցը հրապարակվի ԿԸՀ-ի ոստկայքում և պարբերաբար թարմացվի հնարավոր արտահերթ նիստերից առաջ:
13. Հաշվի առնելով, որ ԸԸՀ-ներն ընտրական բողոքներ ներկայացնելու ուղիներից մեկն են, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցառումները՝ ապահովելու, որպեսզի ընտրություններով շահագրգռված անձինք կարողանան հավուր պատշաճի բողոքներ ներկայացնել և դիտորդական գործունեություն ծավալել:

14. Հարկ է քննարկել ՏՀՀ-ներն ավելի վաղ՝ քվեարկության օրվանից առաջ կազմավորելու նպատակահարմարությունը, որպեսզի բարելավվի վերապատրաստումը, պլանավորվեն աշխատանքները և լուծվեն ՏՀՀ-ի տարածքում ընտրողների ցուցակները փակցնելուն առնչվող խնդիրները:

15. Աղյուսակավորման համակարգչային ծրագրերը պետք է ներառեն տվյալների սխալ մուտքագրումից պաշտպանող ողջամիտ երաշխիքներ: ՏՀՀ-ների վերապատրաստումը պետք է ներառի այդ երաշխիքների հստակ բացատրություն՝ ՏՀՀ-ներին քվեարկության օրվան նախապատրաստելու շրջանակներում:

#### Գ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

16. Ընտրողների ցուցակի ստույգությունը բարելավելու ուղղությամբ գործադրվող ջանքերը պետք է շարունակվեն, այդ թվում՝ առկա այլ հանրային գրառումների հետ հանդիպակաց ստուգումների (“cross-checking”) միջոցով:

17. Եթե համապատասխան մարմինները որոշեն ընտրողների ցուցակների մասին տվյալներ հրապարակել ըստ սեռերի, դա կարող է ավելի հստակ տեղեկություններ ապահովել այն մասին, թե քանի արական և քանի իգական սեռի ընտրող է գրանցված, ինչպես նաև նպաստել ընտրողների գրանցման գործընթացի թափանցիկության հետագա բարելավմանը և բարձրացնել հանրության վստահությունն ընտրողների ցուցակների նկատմամբ:

#### Դ. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

18. Չանքեր պետք է գործադրվեն՝ ավելացնելու մասնակցությունը մեծամասնական ընտրակարգով ընտրություններին, ինչպես նաև՝ կանանց մասնակցությունը:

19. ԿՀՀ-ն պետք է “քաղաքացիական նախաձեռնության” միջոցով թեկնածուներ առաջադրելու գործընթացում ներկայացված ստորագրությունների վավերականության ստուգման ամբողջական գործընթաց մշակի:

#### Ե. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

20. Իշխանությունները և ընտրական մարմինները պետք է ապահովեն վարչական ռեսուրսների չարաշահման բացառումը և հավասար պայմաններ երաշխավորեն ընտրությունների բոլոր մասնակիցներին: Քարոզչության աշխատանքները պետք է հստակորեն տարանջատված լինեն պաշտոնական և պետական գործունեությունից:

21. Ընտրական օրենսգրքի 18.8 հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են նախընտրական քարոզչության սկզբունքների խախտումներին, պետք է

վերանայվեն՝ կատարելագործելու պատիժների համաչափությունը: Խորհուրդ է տվում կիրառել նախագուշացում կամ վարչական տույժ՝ ներկայում ընտրական հանձնաժողովներին վերապահված լիազորությունների փոխարեն, որոնց շրջանակում ընտրական հանձնաժողովները ներկայում իրավասու են սվյալ գործով դիմել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության գրանցումը:

22. Քարոզչության նյութերը պետք է քվեարկության օրը հանվեն ոչ միայն տեղամասային կենտրոնների ներսից, այլ նաև՝ մերձակայքից, օրինակ, տեղամասային կենտրոնի շենքից 50 մետր շառավղով: Քարոզչության նյութերը հանելու համար պետք է պատասխանատու լինի ՏԸՀ-ն:
23. Քարոզչության առնչությամբ կրած ծախսերի 50 տոկոսի չափով պետական բյուջեից հատուցում ստանալու իրավունք ձեռք բերելու համար քվեարկված վավեր ձայների առնվազն 25 տոկոսը ստանալու պահանջը պետք է վերանայել՝ իջեցնելու նշված սահմանաչափը:

## Զ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

24. Հանրային լրատվամիջոցները պետք է որդեգրեն չեզոք, անաչառ և տեղեկացնող խմբագրական դիրքորոշում իրենց բոլոր ծրագրերում. հանրային լրատվամիջոցների լրատվությունը պետք է լինի հավասարակշռված և ըստ փաստերի, ներառյալ ընտրական շրջանում իշխանությունների գործունեության լուսաբանումը: Հեռարձակվող մասնավոր լրատվամիջոցները պետք է հետևեն քարոզչությունն անկողմնակալ և արդարացի կերպով լուսաբանելու հիմնարար պահանջներին:
25. Հանրային լրատվամիջոցներից պետք է պահանջել, որպեսզի նրանք տարբեր ձևաչափերով ընտրողներին ներկայացնեն համապարփակ տեղեկատվություն ընտրական գործընթացի բոլոր առանձնահատկությունների մասին, ներառյալ ընտրողների կրթումը, ինչպես նաև բողոքարկման համակարգի մասին տեղեկացումը:
26. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է դիտարկի նախընտրական քարոզչության շրջանում լրատվամիջոցների իր մոնիտորինգն անցկացնելու նպատակահարմարությունը՝ բացահայտելու համար լրատվական թողարկումներում անհավասար և նախապատվելի լուսաբանման դեպքերը: Հանձնաժողովի մոնիտորինգի եզրակացությունները պետք է ժամանակին հրապարակվեն, որպեսզի Հանձնաժողովը և կիրարկող համապատասխան մարմինները կարողանան կանխարգելիչ միջոցառումներ նախաձեռնել և իրականացնել:
27. Հարկ է քննարկել անվճար և վճարովի եթերաժամանակը բաշխելու նպատակով ԿԸՀ-ի կողմից անցկացվող վիճակահանության ամսաթիվը փոխելու

նպատակահարմարությունը, որպեսզի նշված վիճակահանությունն անցկացվի նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ:

28. Հարկ է քննարկել մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներին լրատվամիջոցներից օգտվելու նվազագույն երաշխավորված չափ տրամադրելու նպատակահարմարությունը, որպեսզի նրանք կարողանան հաղորդել իրենց քարոզչական ուղերձները:

29. Ընտրական օրենսգիրքը հարկ է փոփոխել՝ նախատեսելու համամասնական, ինչպես նաև մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող քաղաքական սուբյեկտներին պետության կողմից ֆինանսավորվող տպագիր մամուլում անվճար որոշակի տեղ հատկացնելու նպատակահարմարությունը:

30. Հեռարձակման կարգավորման անկողմնակալությունն ապահովելու նպատակով հարկ է լրացուցիչ փոփոխություններ կատարել “Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին” օրենքում՝ նախատեսելու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ավելի բազմազան կազմ՝ ներառելով լրատվական գործի մասնագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: Նմանապես, Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդը չպետք է ընտրվի քաղաքական մեկ խմբավորման կամ միայն քաղաքական ուժերի կողմից:

31. Լրատվամիջոցների բազմազանությունն ավելացնելու նպատակով, “Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին” օրենքով նախատեսված՝ լիցենզիաների տրամադրման ընթացակարգում հարկ է հաշվի առնել տարբեր շահերը և գործընթացը դարձնել ավելի թափանցիկ, ընտրության համար սահմանելով ավելի շատ քանակական գնահատման ենթարկա չափորոշիչներ, որը թույլ կտա հանրության նկատմամբ ավելի մեծ հաշվետվողականություն ապահովել:

32. Իշխանությունները պետք է էլ ավելի ամրապնդեն հանրային հեռարձակողի կարգավիճակը՝ սահմանելով ֆինանսավորման հստակ և թափանցիկ համակարգ, որը հիմնված կլինի բազմակի աղբյուրների վրա և կնվազեցնի նրա կախվածությունը պետական բյուջեից:

Է. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

33. Հարկ է ապահովել այն դրույթների խիստ կիրարկում, որոնց համաձայն վավեր կհամարվի միայն այն քվեաթերթիկը, որը հակառակ կողմում կրում է համապատասխան ՏԸՀ-ի անդամների երեք պահանջվող ստորագրությունները:

34. Ցանկալի է որպես ստանդարտ նշան պահպանել “V” նշանը, սակայն հարկ է խրախուսել “Վ” նշանի ընդունելի տեսք հանդիսացող նշանների ավելի

գործնական կամ ազատական մեկնաբանումը՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որը գերակայում է ընտրողի մտադրության հստակ արտահայտվածությունը:

35. Քվեախցիկները տեղամասային կենտրոններում հարկ է տեղադրել ստանդարտ դասավորմանը համապատասխան: Այն դասավորման պահպանումը, որի դեպքում քվեախցիկի բաց կողմը դեմքով ուղղված է դեպի քվեարկության սենյակը, ընդունելի է միայն այն դեպքում, երբ քվեարկության գաղտնիությունը լիովին պահպանվում է:
36. Օգնությամբ քվեարկելու դեպքերը կարող են գրառվել ՏԸՀ-ի մատյանում՝ լրացնելով քվեարկող անձի և նրան օգնած անձի անունները: Մեկ անձը պետք է իրավունք ունենա օգնել միայն մեկ քվեարկողի:
37. Քվեաթերթիկները շարժական քվեատուփից տեղափոխելու կոնկրետ ժամ պետք է սահմանված լինի:
38. Օրենքը պետք է հստակ դրույթներ ներառի ՏԸՀ-ի գտնվելու վայրից ՏԸՀ-ի անդամների՝ քվեարկության, քվեաթերթիկների հաշվարկի և աղյուսակավորման ընթացքում պատասխանատու ԸԸՀ-ին կամ ԿԸՀ-ին հեռախոսով արդյունքներ հայտնելու մասին: Հարկ է արգելել բջջային հեռախոսների օգտագործումը տարածքի ներսում քվեաթերթիկների հաշվարկի և արձանագրության կազմման ընթացքում:
39. Ելակետային տվյալները, ներառյալ ստացված քվեաթերթիկների և քվեարկության ծրարների թիվը, պետք է ՏԸՀ-ի արդյունքների արձանագրության մեջ լրացված լինեն նախքան քվեարկության մեկնարկը:
40. Համապատասխան մարմնի կողմից վերջնական պաշտոնական արդյունքները հայտարարելու ժամանակ ԿԸՀ-ի ռստկայքում պետք է հրապարակվեն մեծամասնական ընտրակարգի արդյունքները՝ ըստ առանձին ՏԸՀ-ների:
41. Թափանցիկությունն ապահովելու նպատակով պետք է սահմանել խիստ ժամկետ, օրինակ՝ քվեարկության օրվանից հետո յոթ օր, որի ընթացքում ընտրությունների արդյունքները պետք է ՏԸՀ-ի “տեսանելի վայրում” փակցված մնան:
42. Ընտրողների կրթումը, օրինակ՝ “մի վաճառիք քո ձայնը” քարոզարշավի տեսքով, պետք է կատարելագործել, դրանում անդրադառնալով նաև քվեարկության օրվա ընթացակարգերին և նպաստելով ընտրական համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը:

43. ԿԸՀ-ն պետք է կարգավորի դաշտը, որպեսզի Հայաստանի քաղաքացիները Հայաստանում անցկացվող ընտրություններում չգրանցվեն որպես միջազգային դիտորդներ և, նմանապես, որպեսզի այլ պետությունների քաղաքացիները չգրանցվեն որպես տեղական դիտորդներ, որպեսզի հնարավոր լինի խուսափել ընտրությունների դիտարկման ընթացքում շահերի հնարավոր բախումներից:

Թ. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

44. Լրացուցիչ էական ջանքեր պետք է գործադրել՝ զգալի չափով և արդյունավետորեն բարձրացնելու կանանց ներկայացվածությունը խորհրդարանում և կառավարությունում, կանանց մասնակցությունը՝ որպես թեկնածուների, ինչպես նաև՝ կանանց մասնակցությունը բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների կազմում:

## ԱՌԴԻՐ 1 – ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանրապետության ողջ տարածքում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններում հինգ կուսակցություններ հաղթահարեցին Ազգային ժողով մտնելու համար սահմանված՝ քվեաթերթիկների հինգ տոկոսի շեմը: Հինգ կուսակցություններից երեքը համամասնական ընտրակարգով մտել էին Ազգային ժողով նաև 1999 և 2003 թվականների խորհրդարանական ընտրություններում: “Բարգավաճ Հայաստան” և “Ժառանգություն” կուսակցություններն առաջին անգամ 2007 թվականին մուտք գործեցին Ազգային ժողով: Մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններում 9 ոչ կուսակցական թեկնածուների ընտրվելը զգալի նվազում էր 2003 թվականի համեմատ, երբ մեծամասնական ընտրակարգով ընտրված 56 պատգամավորներից 37-ն անկուսակցական էին:

Նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը գումարվեց հունիսի 7-ին: “Օրինաց երկիր” և “Ժառանգություն” կուսակցությունների կողմից ընտրված պատգամավորներն այդ նիստին ներկա չէին, քանի որ սպասում էին ընտրությունների արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դատարան ներկայացված բողոքների դատական քննության ավարտին:

2007 թ. մայիսի 12-ի ընտրություններից հետո Ազգային ժողովում տեղերը բաշխվել են հետևյալ կերպ.<sup>117</sup>

	Համամասնական	Մեծամասնական	Ընդամենը
Հանրապետական կուսակցություն	41	22	63
Բարգավաճ Հայաստան	18	7	25
Հայ Հեղափոխական Դաշնակցություն	16	—	16
Օրինաց երկիր	8	2	10
Ժառանգություն	7	—	7
“Դաշինք” կուսակցություն	0	1	1
“Քաղաքացիական նախաձեռնություն” (ոչ կուսակցական)	—	9	9
Ընդամենը	90	41*	131*

\* Թիվ 15 ԸՀ-ում մեծամասնական ընտրակարգի հաղթողը՝ Խաչիկ Մանուկյանը (Հանրապետական կուսակցություն), հրաժարվեց ընդունել իր մանդատը, քանի որ տվյալ ընտրատարածքում արդյունքների վավերականության վերաբերյալ տարակարծություն կար: Այդ ԸՀ-ում կրկնակի ընտրություն նշանակվեց ապրիլի 26-ին, որում հաղթեղ Խաչիկ Մանուկյանը:

Ազգային ժողովում տեղերը խմբակցությունների միջև բաշխվել են հետևյալ կերպ.<sup>118</sup>

<sup>117</sup> Արդյունքները՝ ըստ ԿՀ-ի ուսուկայքի, տես [www.elections.am](http://www.elections.am) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ի տեղեկությունների:

<sup>118</sup> <http://www.parliament.am/deputies.php?sel=groups&lang=eng>: Տեղերի բաշխման տարբերությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ընտրություններից կարճ ժամանակ անց ընտրված պատգամավորների կողմից կուսակցական դաշինքների մեջ կատարված որոշ փոփոխություններով:



	Խմբակցության անդամներ
Հանրապետական կուսակցություն	65
Բարգավաճ Հայաստան	25
Հայ Հեղափոխական Դաշնակցություն	16
Օրինաց երկիր	8
Ժառանգություն	7
Ժողպատգամավոր խումբ	10
Ընդամենը	131

## ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ-ի այն հիմնական կառույցն է, որն աջակցում է մասնակից պետություններին՝ “ապահովելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ լիարժեք հարգանք, հետևելու օրենքի գերակայությանը, տարածելու ժողովրդավարության սկզբունքները և (...) կառուցելու, ամրապնդելու և պաշտպանելու ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև հանդուրժողականություն սերմանելու ողջ հասարակության մեջ” (1992 թ. Հենսինկյան գազաթաժողովի փաստաթուղթ): Դա կոչվում է ԵԱՀԿ-ի գործունեության “մարդկային” տարածաչափ (“human dimension”):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, որը գտնվում է Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում, ստեղծվել է 1990 թվականի Փարիզյան գազաթաժողովում՝ որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991 թ. մայիսից: Մեկ տարի անց Գրասենյակը վերանվանվել է՝ նոր անվանման մեջ արտացոլելու արդեն ընդլայնված լիազորությունների շրջանակը, որը ներառել է նաև մարդու իրավունքները և ժողովրդավարացումը: Այսօր ԺՀՄԻԳ-ն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում առաջատար կազմակերպությունն է **ընտրությունների դիտարկման** ոլորտում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը յուրաքանչյուր տարի համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների ուղարկումը տարբեր պետություններ՝ գնահատելու ԵԱՀԿ-ի տարածաշրջանում անցկացվող ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած հանձնառություններին, ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային չափանիշներին և ազգային օրենսդրության պահանջներին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի յուրահաստուկ մեթոդաբանությունն ապահովում է ողջ ընտրական գործընթացի խորը ուսումնասիրություն: Աջակցության ծրագրերի միջոցով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն օգնում է մասնակից պետություններին բարելավել իրենց ընտրական համակարգը:

**Ժողովրդավարացման** ոլորտում Գրասենյակի աշխատանքները ներառում են. իրավունքի գերակայություն, օրենսդրական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա, տեղաշարժի ազատություն և գենդերային հավասարություն: Ամեն տարի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նպատակային աջակցության մի շարք ծրագրեր է իրականացնում՝ նպաստելու ժողովրդավարական կառույցների զարգացմանը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաև աջակցում է մասնակից պետություններին՝ կատարելու իրենց պարտավորությունները մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում, ԵԱՀԿ-ի գործունեության “մարդկային” տարածաչափի շրջանակներում ստանձնած հանձնառություններին համահունչ: Այդ խնդրին հասնելու համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն աշխատում է տարբեր գործընկերների հետ և սերտացնում համագործակցությունը, զարգացնում կարողությունները և մասնագիտական փոքր և գիտելիքներ հաղորդում տարբեր թեմատիկ ոլորտներում, ներառյալ մարդու իրավունքներն ահաբեկչության դեմ պայքարում, թրաֆիքինգի ենթարկված մարդկանց մարդու իրավունքների պաշտպանության բարելավումը,

մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը և վերապատրաստումը, մարդու իրավունքների մոնիտորինգը և հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը, և կանանց իրավունքները և պաշտպանվածությունը:

**Հանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի** ոլորտներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն օժանդակություն է ցուցաբերում մասնակից պետություններին՝ բարելավելու նրանց պայքարն ատելության հողի վրա կատարված հանցանքների և ռասիզմի, օտարավախության, անտիսեմիտիզմի դրսևորումների և անհանդուրժողականության այլ ձևերի դեմ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գործունեությունը հանդուրժողականության ապահովման և խտրականության դեմ պայքարի ոլորտներում կենտրոնացած է հետևյալ ուղղություններով. օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, ատելության հողի վրա կատարված հանցանքների և նման այլ դրսևորումների մոնիտորինգ, հաշվետվությունների ներկայացում և պայքարի միջոցառումների դիտարկում, ինչպես նաև կրթական միջոցառումներ, որոնց նպատակն է հանդուրժողականություն, հարգանք և փոխըմբռնում սերմանել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին խորհուրդներ է տրամադրում **ռոմաների** և **սինթիների** նկատմամբ նրանց քաղաքականության վերաբերյալ: Գրասենյակը նպաստում է ռոմա և սինթի համայնքների կարողությունների զարգացմանը և նրանց միջև ցանցային կապերի խորացմանը, ինչպես նաև՝ խրախուսում ռոմաների և սինթիների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականության համար պատասխանատու մարմիններին:

ԺՀՄԻԳ-ի ողջ գործունեությունն իրականացվում է ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների, ԵԱՀԿ-ի կառույցների և տարբեր պետություններում ԵԱՀԿ-ի գրասենյակների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցության և համակարգման պայմաններում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ԺՀՄԻԳ-ի ուսկայքից ([www.osce.org/odhr](http://www.osce.org/odhr)):